13 ԱՊՐԻԼ 2013 ՇԱԲԱԹ 59(5142)

# Ազգ
Azg

ISSN: 1829-1651
9 771829 165003 13059

# ԱՄՆ-ը 2014-ին 30.84 միլիոնով կաջակցի Հայաստանին

Նախագահ Օբամայի վարչությունը որոշել է ԱՄՆ 2014 թ. բյուջեում Հայաստանին հատկացնել ընդամենը 30.84 միլիոն դոլար, ընթացիկ տարվա 35,84 միլիոնի դիմաց, երեկ տեղեկացրեց Ամերիկայի հայկական համագումարը: Վերջինի տարածած հաղորդագրության համաձայն, շուրջ 5 միլիոն դոլարի այս նվազումը միայն Հայաստանով չի սահմանափակվում. առաջիկա տարում կկրճատվի Եվրասիայի ու Կենտրոնական Ասիայի երկրներին տրամադրվող ամերիկյան օգնությունը:

Այսուհանդերձ, Վաշինգտոնը պահպանել է Հայաստանին ու Ադրբեջանին տրվող «օտարերկրյա զինված ուժերի ֆինանսավորման» չափաքանակը՝ յուրաքանչյուրին 2.7 միլիոն դոլար, առավել՝ 600-հազարական՝ միջազգային ռազմական վերապատրաստական ծրագրերի համար:

Ինչ վերաբերում է Արցախին տրվող ամենամյա ֆինանսական օժանդակությանը, Օբամայի վարչակազմի բյուջեում դեռեւս նշված չէ այդ մասին: Բոլոր տարագաներում Հայկական կոնգրեսական խումբը պահանջել է 5 միլիոն դոլար հատկացնել Արցախին:

# Հորդանանի թագավորը հաստատեց հայոց պատրիարքի ընտրությունը

Երուսաղեմի հայոց պատրիարքությունից ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ ապրիլի 10-ին Հորդանանի Աբդալլա Բին Հուսեյն թագավորը Ամմանի իր պալատում ընդունել է Երուսաղեմի հայոց նորընտիր պատրիարք Նուրհան արք. Մանուկյանին ու նրան ընկերակցող պատվիրակությանը եւ պաշտոնապես հանձնել հաստատագիրը: Աբդալլա թագավորն իր ողջույնի խոսքում վերահաստատել է Երուսաղեմի իսլամական ու քրիստոնեական սրբատեղիների պահպանության եւ պաշտպանության իր երկրի հանձնառությունը եւ շնորհավորել Նուրհան արք. Մանուկյանի ընտրությունը պատրիարքության գահին: Նորընտիր պատրիարքն իր շնորհակալական խոսքում խոստացել է ջանք չխնայել հոգուտ սուրբ վայրերի, ինչպես նաեւ Երուսաղեմի, Պաղեստինի ու Հորդանանի հայ համայնքների:

Հիշեցնենք, որ Երուսաղեմի հայոց, ինչպես նաեւ հույների պատրիարքների ընտրությունը ավանդաբար վավերացվում է Հորդանանի թագավորի եւ Իսրայելի կառավարության կողմից:

# Մեր երիտասարդների 74 տոկոսը կողմ է բանակում ծառայելուն




ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետը երկամյա հետազոտություն է անցկացրել՝ պարզելու հեռուստատեսության, սոցիալական ցանցերի, համակարգչային խաղերի եւ ֆիլմերի ազդեցության խնդիրները դեռահասների վրա: Երեք հոգուց բաղկացած խումբը 2 տարի ուսումնասիրել է հատկապես այն էլեկտրոնային մեդիաարտադրանքը, որն առավել լայն սպառում ունի դեռահասների շրջանում: Հարցումներին մասնակցել է 5000 դեռահաս՝ հանրապետության տարբեր մարզերից: Հարցումներն օգնել են մասնագետներին պատկերացում կազմելու հայ դեռահասի մեդիահետաքրքրությունների, մտածելակերպի եւ արժեհամակարգի մասին:

«Մեզ առավել հետաքրքրում էր, թե ինչ է մտածում դեռահասը իր հայրենիքի, բանակի, ընտանիքի, հարազատների, դպրոցների եւ մի շարք այլ կարեւոր իրողությունների մասին», ներկայացնելով հետազոտության արդյունքները՝ ասաց ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկանի տեղակալ **Անահիտ Մենեմշյանը**: Հարցվածների գերակշռող մեծամասնությունը դիտում է հեռուստատեսություն, 5 տոկոսը ռադիո է լսում:

Մեր երիտասարդների 74 տոկոսը հեռուստատեսության լավագույն արտադրանքը համարում է սերիալը: Զավեշտալի դեպքեր են արձանագրվել, երբ հեռուստահաղորդման անվան տակ էլ երիտասարդները սերիալի անուն են գրել: Աստղային կյանքին վերաբերյալ հաղորդումներ դիտում է 30 տոկոսը, եւ միայն 10 տոկոսին են հետաքրքրում հասարակական-քաղաքական հաղորդումները:

Երիտասարդների մեծամասնությունը՝ 70 տոկոսը, համացանցը գնահատում է միայն որպես շփվելու համար նախատեսված հարթակ: Առավել քիչ տոկոսն է համացանցն ընկալում որպես տեղեկատվություն ստանալու աղբյուր: Սոց. հարցումը պարզել է, որ մեր երիտասարդների գերակշռող մեծամասնությունը նախընտրում է odnoklassniki.ru կայքը: *Տես էջ 2*

# Իրանն ուզում է վերանայել Թուրքմենչայի պայմանագիրը



Իրանի խորհրդարանի պատգամավորները աշխատանք են սկսել Թուրքմենչայի հաշտության պայմանագրի վերանայմանը վերաբերող օրինագծի վրա, հաղորդում է FARS գործակալությունը: Գրող եւ դիվանագետ Ալեքսանդր Գրիբոյեդովի կազմած պայմանագիրը Ռուսական կայսրությունը եւ Պարսկաստանը ստորագրեցին 1828 թվականին:

Պատգամավորները պնդում են, թե «ֆրանսիացիների դավաճանության հետեւանքով» Ռուսաստանի նվաճած տարածքները, ըստ պայմանագրի տեքստի, նրան փոխանցվել են ոչ թե առհավետ, այլ 100 տարով, եւ պետք է Իրանին վերադարձվեին ճիշտ այնպես, ինչպես Մեծ Բրիտանիան Հոնկոնգը վերադարձրեց Չինաստանին:

Իրանցի պատգամավորները խոսում են «օկուպացված» ադրբեջանական հողերի մասին, մինչդեռ 1826-1828 թթ. պատերազմում Ռուսաստանի հիմնական ձեռքբերումները դարձան Երեւանի եւ Նախիջեւանի խանությունները, որոնց զգալի մասը ներկայումս կազմում է Իրանի դաշնակից Հայաստանը, այլ ոչ թե Ադրբեջանը:

Ներկայումս Ադրբեջան կոչվող երկրի մեծ մասը Վրաստանի եւ Դաղստանի հետ Ռուսաստանին էր անցել ավելի վաղ՝ 1813 թ. Գյուլիստանի հաշտության պայմանագրով, որը վերջ դրեց 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմին: Իրանցի պատգամավորները վերջինս համարում են «Վրաստանը ռուսական օկուպացումից ազատագրելու փորձ»:

# Թուրքիայում աշակերտների 70 %-ը հույներին, հայերին եւ հրեաներին համարում է վնասակար տարր

Օրերս Ադանայում, ինչպես ապրիլի 11-ի համարում նշել է «Ռադիկալը», հարցախույզ է անցկացրել կրթության եւ գիտության աշխատողների արհմիությունը: Հարցախույզին մասնակցել է 800 ուսուցիչ եւ 1066 աշակերտ: Աշակերտների 70 %-ը համոզված է, որ Թուրքիայում բնակվող հույների, հայերի եւ հրեաների մի մասը ջանում է առիթի դեպքում վնաս պատճառել երկրին, 15 %-ը մտածում է հետեւյալ կերպ. «Թուրքը թուրքից զատ բարեկամ չունի»:

Մեկ այլ հարցախույզ Ադանայի միջնակարգ դպրոցներում անցկացրել է «Դասագրքերի ուսումնասիրման» հանձնաժողովը: Քաղաքի տարբեր թաղերում գործող դպրոցների աշակերտների 62 %-ը թուրքերին համարում է «հերոս եւ զինվորական ազգ», 36 %-ը կարծում է, որ «լավ կրթությունը առաջին հերթին անհրաժեշտ է տղաներին եւ ոչ թե աղջիկներին», իսկ 25 %-ը կողմնակից է «հարկ լինելու դեպքում անհատի հանուն պետության զոհաբերման»:

Հ. Չ.

# Փաստաբանները գործադուլ կանեն

**Փաստաբան Կարեն Մեժլումյանի հավաստիացմամբ՝ դատական համակարգը հասարակության շրջանում անվստահություն ունեցող կառույցներից մեկն է: Ոլորտի թերություններից դժգոհ են ոչ միայն փաստաբանները, այլեւ համակարգի բազմաթիվ աշխատողներ: Հետեւաբար ոլորտի առողջացման համար արմատական վերափոխում է անհրաժեշտ: Թեպետ 10 տարի առաջ փաստաբանները բողոքի ակցիա էին անցկացնում, բոյկոտում դատական նիստերը, սակայն դա արդյունք չտվեց եւ այդ առնչությամբ որեւէ դրական քայլ չարձանագրվեց:**

**Հիշեցնենք, որ արդեն մեկ տարի է՝ փաստաբանները ստեղծել են հանձնախումբ, որ հավաքել է Վճռաբեկ դատարանից «երկակի ստանդարտների կիրառման» բազմաթիվ դեպքեր, երբ մի դեպքում դատավորը խախտումների վրա աչք է փակում, մյուսի դեպքում՝ ոչ:**

**Մեժլումյանի գնահատմամբ՝ դժգոհություն առկա է դատական բոլոր ատյանների հանդեպ, սակայն առավելագույն քննադատությունն ուղղված է ընդհանուր իրավասության եւ վճռաբեկ դատարաններին:**

**«Փաստաբանների ակցիաները, որոնք տեղի են ունենում, անվստահություն են դատական համակարգի նկատմամբ: Մենք պատրաստվում ենք կոնկրետ բացահայտումներ անել արդարադատության ոլորտում առկա թերությունների վերաբերյալ», ասաց Մեժլումյանը :**

**Ոլորտն օրենսդրորեն կարգավորելու նպատակով փաստաբանները մոտ ապագայում կրկին հանդես կգան գործադուլով, կրկին Վճռաբեկ դատարանի դեմ: Փաստաբան, բողոքի ակցիան համակարգող խմբի անդամ Հայկ Ալումյանի խոսքերով՝ այժմ փաստաբանները նախապատրաստական աշխատանքների մեջ են եւ ամենայն հավանականությամբ մայիսին կսկսեն գործադուլների շարքը:**

Հ. Հ.

# Րաֆֆին հրաժարական է պահանջում ոչ միայն իշխանությունից, այլեւ «կեղծ ընդդիմությունից»

Րաֆֆի Հովհաննիսյանի Մոսկվա գնալու համացանցային հեգնանքը երեկ քիչ մնաց սարկազմի հասնի ու գուցե հասավ. «Գնում է՝ ի՞նչ անի», «8 մլն մոսկվացուն բարեւելու է գնացել», «Գնացել է՝ Պուտինից ժողովրդի հաղթանակը բերի»: «Ուղիղ Տիզբոն»: «Չերեզ Մոսկվա՝ Վաշինգտոն», հեգնել էր Է. Շարմազանովը դրա նախորդ օրը: «Էլ չի գալու», ասել էր ՀԱԿ խմբակցությունից Լյուդմիլա Սարգսյանը: Դե իսկ Րաֆֆի Հովհաննիսյանի շտաբը տարածել էր, որ Մոսկվայից գալու էր ու հենց ժամը 18-ին երեկ հանդես գար ծրագրային ելույթով:

Ճիշտն ասած, Ր. Հովհաննիսյանը գալը՝ եկավ, բայց ծրագրային ելույթ այդպես էլ չլսեցինք: Եթե ելույթի ծրագրայինը համարվում է նա, որ ասաց եկող շաբաթ «Անի» հյուրանոցում հավաքվելու մասին, երեւում է, տարբեր պատկերացումներ ունեինք ծրագրային ելույթի մասին: Բացի այդ էլ՝ ոչ մի կարգին պարզաբանում, թե ինչու էր Մոսկվա գնացել՝ Մոսկվան իրեն հրավիրե՞լ է ժողովրդի կարծիքը լսելու:

Ազատության հրապարակում երեկ կրկին թագավորում էր անձրեւը: Կարծեցինք, թե մարդ չի գա Րաֆֆու հրավիրած հանրահավաքին, բայց, պատկերացրեք, եկել էին: Թեեւ՝ ավելի շատ «Բարեւի» ակտիվիստներն էին, եւ ընդհանուր թվով՝ մարդիկ շատ չէին: Ու էլի չնայած՝ Րաֆֆին ասաց, թե հրաշալի եղանակ է:

Սպասելի էր նրա ցասումը ապրիլի 9-ին տեղի ունեցածից երեկվա օրվա՝ նրան ուղղված ողջ հեգնանքից հետո: Նրա ցասումից բաժին հասավ եւ իր կողքին չկանգնած ընդդիմադիրներին, եւ «դեպի արյուն տանող սրիկա» սադրիչներին, որոնք այլեւս չեն լինելու. «Չենք ընդունում նրանց, ովքեր լինելով գործող իշխանության մեջ, թաքուն քաղաքացի ձեւանալով՝ մեր արյան վրայով քաղաքական կարիերա էին ուզում սարքել»: Խոսեց նաեւ, որ հնարավոր է՝ սխալներ արել է, բայց որ խոստացել է՝ հաղթանակը տանելու է, եւ արյուն չի լինելու: Ընդունելով իրեն քննադատելու ուրիշների իրավունքը՝ ամոթ ուղղեց նրանց, ովքեր, իր բառերով, ապրիլի 9-ին իր կողքին չէին ու տաքուկ կուսակցական անկյուններից Րաֆֆու տապալման մասին էին խոսում, եւ ովքեր օգտվելով նրա «մի ժամվա բացակայությունից ուզում էին ժողովրդի վոժդ համարել իրենց»:

*Տես էջ 2*

# Երկու պահանջ եւ մեկ կամք

Ազատության հրապարակում բոլոր ժամանակներում հավաքված ժողովուրդը, ըստ էության, մեկ կարեւորագույն պահանջ ունի, եւ այդ պահանջն ամենեւին էլ ընտրությունների արդյունքների վերանայումը չէ կամ մարդու իրավունքների պաշտպանության ցածր մակարդակը. ժողովուրդն ինչպես իր տեսակի մեջ է պարզ, այնպես էլ իր պահանջում. նա պարզապես ցանկանում է բարելավել իր սոցիալական իրավիճակը, ավելի պարզ՝ լավ ապրել: Քանի որ ժողովրդի լավ ապրելու խնդիրը չի լուծվում տվյալ իշխանության օրոք, ապա, բնականաբար, ժողովուրդը լուծողների դերում տեսնում է ընդդիմությանը, որն արդեն, հենվելով ժողովրդի լավ ապրելու պահանջի վրա, վիճարկում է նաեւ ընտրությունների արդյունքները, վեր հանում մարդու իրավունքների խախտման դեպքեր: Եվ ընդդիմության վարպետությունից է կախված, թե որքանով ժողովուրդն իր լավ ապրելու պահանջի բավավարումը կկապի տվյալ ընդդիմության հետ:

Հետեւաբար, երբ հրապարակում տեսնում ենք ընդդիմությանն ու ժողովրդին, եկեք տարբերակենք նրանց պահանջները: Յուրաքանչյուր իշխանություն, նույնիսկ արդի պատմության մեջ ամենախոստումնալից սոցիալիստական իշխանությունը, ամենեւին էլ չբարելավեց ժողովրդի լավ ապրելու պահանջը, ինչը խոստանում էր հեղափոխությունից առաջ, ուրեմն իշխանությունը՝ լինի կարմիր, դեղին, թե կապույտ, բոլորովին չի լուծում ժողովրդի լավ ապրելու խնդիրը, այդ իսկ պատճառով էլ յուրաքանչյուր երկրում յուրաքանչյուր ընդդիմադիր ուժ հնարավորություն է ստանում դառնալու իշխանություն: Պարզապես որոշ երկրներում ընդդիմությունից իշխանություն դառնում են ընտրություններով, մեզանում, որպես կանոն, բանակցություններով:

Բայց, սա, իհարկե, խոսակցության այլ թեմա է, տվյալ պարագայում կենտրոնանանք երկու պահանջի վրա: Ժողովրդի լավ ապրելու պահանջին այսօրվա ընդդիմությունը շաղկապել է Ընտրական օրենսգրքի բարելավումը, երկրում պետական կառավարման համակարգի փոփոխությունը, օրինակ, անցումը՝ կիսանախագահական հանրապետությունից խորհրդարանականի եւ այլն: Ընդ որում, այսօրվա ընդդիմությանը հաջողվել է բացատրել ժողովրդի մի ստվար մասի, որ լավ կապրի այն ժամանակ, երբ Ընտրական օրենսգիրքն ու կառավարման համակարգը փոփոխությունների ենթարկվեն: Սակայն այս վերջին երկուսը գոնե ոչ թե ժողովրդի պահանջներն են, այլ հենց ընդդիմության: Հետեւաբար, եթե իշխանությունը բավարարում է այս պահանջները, այսինքն՝ համաձայնում է այսօրվա ընդդիմության հետ՝ առնվազն քննարկելու երկրում կառավարման հակակարգի ու Ընտրական օրենսգրքի առաջարկվող փոփոխությունները, ապա, ըստ էության, ամենեւին էլ չի բավարարում ժողովրդի պահանջը, այլ ընդամենը՝ ընդդիմության, գուցե նաեւ նպատակ ունենալով վերջինիս ներմուծել իշխանական համակարգ՝ տալով իշխանական լծակներ, բանակցությունների, այլ ոչ թե ընտրությունների արդյունքով, ի դեպ: Իսկ եթե իշխանությունը, փոխարենը ընդդիմության հետ «Ընտրական օրենսգիրք քննարկելու», կառավարական ծրագրում ներառում է ժողովրդի կենսամակարդակը էականորեն, եթե հնարավոր չէ՝ զգալիորեն, բարելավելու գործուն մեխանիզմներ ու ծրագրեր, եւ ժողովուրդն այդ ծրագրերի արդյունավետությունն անմիջապես կամ կարճ ժամանակահատվածում զգում է, ապա ստացվում է, որ իշխանությունը զրկեց ընդդիմությանը իշխանություն դառնալու ռեսուրսից, քանի որ ժողովուրդը ստացավ իր կարեւորագույն խնդրի լուծումը ոչ թե ընդդիմությունից, այլ իշխանությունից:

Հետեւաբար, եթե մանավանդ այսօր, երբ «Ժառանգության» ներկայացուցիչ Զարուհի Փոստանջյանը հայտարարում է. «Ապրիլի 9-ին Սերժ Սարգսյանի քաղաքական հուղարկավորությունն էր, եւ այսուհետեւ մեզ համար Սերժ Սարգսյան նախագահի գոյություն չունի, հետեւաբար իմաստ չենք տեսնում նրա հետ նստելու բանակցությունների», ապա արդյոք ավելի նպատակահարմար չէ՞ իշխանությանը, որ դրսեւորելով քաղաքական կամք՝ պարզապես լուծի ժողովրդի ամենակարեւոր խնդիրը:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

*Հ. Գ.-Ի դեպ, օրեր առաջ ՕԵԿ կուսակցության նախագահ Արթուր Բաղդասարյանը «Կենտրոն» հեռուստաընկերության եթերում հայտարարել էր, թե «մեր ժողովուրդը լավ կապրի այն ժամանակ, երբ իր սրտով ընտրի իր իշխանություններին», թերեւս՝ առանց մեկնաբանությունների:*

«ՊԱՐՈՆ 5%»

# Գալուստ Գյուլբենկյանի հիշատակին նվիրված կոնֆերանս Փարիզում



**Ապրիլի 9-ին Փարիզում տեղի ունեցավ «Երկու աշխարհով ճանապարհորդություն Գալուստ Սարգիս Գյուլբենկյանի հետ» խորագրով կոնֆերանս՝ նվիրված Գալուստ Գյուլբենկյանի գործունեությանը: Գ. Գյուլբենկյան հիմնարկության եւ «Երկու աշխարհ» պարբերականի կազմակերպած միջոցառման պատվավոր հյուրերն էին Ֆրանսիայում ՀՀ դեսպան Վիգեն Չիտեչյանը, ինչպես նաեւ Պորտուգալիայի ու Սինգապուրի դեսպանները:**

Բացման խոսքով հանդես եկավ «Գյուլբենկյան» հիմնարկության նախագահ **Արթուր Սանտոս Սիլվան**՝ ներկայացնելով հիմնադրամի ստեղծման նախապատմությունը, հիմնական նպատակները եւ Գալուստ Գյուլբենկյանի ունեցած դերը Պորտուգալիայի զարգացման գործում:

Այնուհետեւ ելույթներով հանդես եկան «Երկու աշխարհ» պարբերականի տնօրեն **Միշել Կրեպյուն**, «Պարտեքս» նավթագազային ընկերության նախագահ **Անտոնիո Կոստա Սիլվան** եւ «Գյուլբենկյան» հիմնադրամի կառավարման խորհրդի անդամ, Գալուստ Գյուլբենկյանի թոռ **Մարտին Եսայանը**:

Բանախոսները ներկայացրին էներգետիկ պաշարների օգտագործման ոլորտում ընթացող համաշխարհային գործընթացները, Գալուստ Գյուլբենկյանի անգնահատելի ներդրումը 20-րդ դարի էներգետիկ պաշարների կառավարման եւ գործարարության զարգացման գործում, ինչպես նաեւ անդրադարձան Գյուլբենկյան հիմնարկության մարդասիրական եւ բարեգործական լայնածավալ գործունեությանը:

Միջոցառման ավարտին դեսպան **Վիգեն Չիտեչյանը** մասնավոր հանդիպում ունեցավ բանախոսների հետ, որի ընթացքում քննարկվեցին վերջիններիս կազմակերպությունների հետ համագործակցության հեռանկարները:

# Մեր երիտասարդների 74 տոկոսը կողմ է բանակում ծառայելուն

*1-ին էջից*

Երիտասարդների 53 տոկոսի գնահատմամբ մեր բանակը հզոր է, 46 տոկոսի գնահատմամբ՝ բանակն իդեալական չէ, բայց վատն էլ չէ, ուղղակի կան խնդիրներ: Երիտասարդների 4 տոկոսն առավել խիստ է գնահատում բանակն ու համարում, որ ներսում ամեն ինչ գլխիվայր է:

Երիտասարդների 74 տոկոսը հաստատակամ է՝ պետք է ծառայել բանակում, 24 տոկոսը նախընտրում է ծառայել, բայց տանն ու ընտանիքին մոտ զորամասում, իսկ 7 տոկոսը մերժում է բանակում ծառայելու գաղափարը:

Խոսելով արտագաղթի եւ այլ երկրում ապրելու ցանկությունների մասին, երիտասարդների 52 տոկոսը հայտարարել է, որ եթե այլ երկրում կարողանա ավելի լավ ապրել, կհեռանա Հայաստանից, 43 տոկոսը կհաղթահարի դժվարությունները եւ երկիրը երբեք չի լքի, իսկ 6 տոկոսը չի ցանկանում ապրել Հայաստանում:

Հ. Հ.

# ՎիվաՍել-ՄՏՍ-ն լեգենդար Վիեննայի ֆիլհարմոնիկ նվագախմբի հայաստանյան համերգի գլխավոր հովանավորն է

«Երեւանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոնը բացել է իր 14-րդ համերգաշրջանը լեգենդար Վիեննայի ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգով: Համերգի գլխավոր հովանավորն է ՎիվաՍել-ՄՏՍ-ն:

«Մեր ընկերությունը հպարտությամբ է աջակցում այնպիսի նախաձեռնությունների, որոնք հնարավորություն են ընձեռում հայաստանյան հանդիսատեսին վայելելու համաշխարհային ճանաչում ունեցող երաժիշտների ելույթները: Այս համերգը եւս մեկ անգամ հաստատում է, որ ՎիվաՍել-ՄՏՍ-ը արվեստի բարեկամն է»,- նշել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:



Նվագախումբը ղեկավարել է 11 «Գրեմմի» պարգեւների արժանացած ամերիկացի հռչակավոր դիրիժոր Մայքլ Թիլսոն Թոմասը: Համերգի մենակատարն էր հանրահայտ վիրտուոզ դաշնակահար Եֆիմ Բրոնֆմանը:

Նվագախմբի այցը Հայաստան խոշոր իրադարձություն է, քանի որ նախկին ԽՍՀՄ երկրներից Ռուսաստանից հետո միակը Հայաստանն է՝ ուր այցելել է աշխարհի ամենահեղինակավոր նվագախումբը: Վիեննայի ֆիլհարմոնիկը հիմնվել է 1842 թվականին, Եվրոպայի եւ ամբողջ աշխարհի ամենահին նվագախումբն է:

# Րաֆֆին հրաժարական է պահանջում ոչ միայն իշխանությունից, այլեւ «կեղծ ընդդիմությունից»

*1-ին էջից*

Անուն չտրվեց, բայց բոլորը հասկացան, որ վերջին խոսքն ուղղված էր Անդրիաս Ղուկասյանին, ով մի պահ, երբ Ր. Հովհաննիսյանը գնացել էր Ծիծեռնակաբերդ, փորձեց իրադրությունը վերցնել իր ձեռքը: Նա նաեւ պահանջեց այն ոստիկանի հրաժարումը, որը ձեռք է բարձրացրել «ապագա քաղաքապետի»՝ Արմեն Մարտիրոսյանի վրա:

Նա հրաժարական էր պահանջում ոչ միայն իշխանությունից, այլեւ կեղծ ընդդիմությունից, իսկ ապրիլի 9-ին իշխանությունը, նրա կարծիքով, հասկացավ, որ ժողովուրդը ոչխարի հոտ չէ: Ասաց, որ պայքարը շարունակելու է, ժողովրդի հաղթանակը տանելու է գյուղեր:

Ամենահետաքրքրականը, սակայն, այն էր, որ իր կողքին չկանգնած ընդդիմությանն իր տեղը դնելուց հետո Ր. Հովհաննիսյանը պարզեց իր մտադրությունը՝ հաջորդ ուրբաթ ժամը 18-ին «Անի» հյուրանոցում միասնական թիմ առաջ բերելու մասին. փաստորեն՝ նա հրավիրեց բոլորին, ով հարգում է ժողովրդին, լինել այդ դահլիճում եւ միասնական ուժ ձեւավորել հետագա պայքարի համար: Ապրիլի 24-ին էլ Ազատության հրապարակից գնալու են Ծիծեռնակաբերդ: Իսկ արդեն «Բարեւ, Երեւան» դաշինքով նախընտրական հանդիպումներ են լինելու Երեւանի համայնքներով: Ահա. սա թերեւս ամենաէականն է՝ «Բարեւի» բոլոր հեղափոխական մեսիջներն այսուհետեւ եւ գուցե հենց սկզբից ուղղված էին եւ են դեպի Երեւանի ավագանու ընտրություններ, իսկ նրա շուրջը աղմուկի պատճառով ընտրությունների մյուս մասնակիցների քարոզարշավը փաստորեն ստվերվում է:

Մ. Խ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Հայաստանի եւ Վրաստանի ԱԳ ղեկավարների հանդիպումը




Ապրիլի 12-ին կայացավ ԱԳ նախարարի պաշտոնակատար Էդվարդ Նալբանդյանի եւ Վրաստանի ԱԳ նախարար Մայա Փանջիկիձեի հանդիպումը, որը Երեւան է ժամանել պաշտոնական այցելությամբ:

Ողջունելով հյուրին **Էդվարդ Նալբանդյանը** գոհունակությամբ նշեց, որ հայ-վրացական բարիդրացիական հարաբերությունները գտնվում են բարձր մակարդակի վրա, ինչի մասին են վկայում քաղաքական երկխոսության տարբերական բնույթը, ընդլայնվող առեւտրատնտեսական շրջանառությունը, ակտիվ հումանիտար կապերը: Նա ընդգծեց, որ համաձայն ձեռք բերված պայմանավորվածության, երկու երկրների ԱԳՆ ղեկավարների հանդիպումները հաճախակի բնույթ են կրում, ինչը զգալիորեն նպաստում է հարաբերությունների զարգացմանը:

Շնորհակալություն հայտնելով հրավերի համար, նախարար **Փանջիկիձեն ընդգծեց**, որ Վրաստանի իշխանությունները հետեւողական են բարեկամ Հայաստանի հետ համագործակցության առավել սերտացմամբ, եւ իր պաշտոնական այցելությունը հենց այդ տրամաբանության մեջ է:

Հայաստանի եւ Վրաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարները հանգամանալից քննարկեցին հունվարին վարչապետ Բիձինա Իվանիշվիլիի Երեւանում Հայաստանի ղեկավարության հետ կայացած հանդիպումներին ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման ընթացքը, անդրադարձան տնտեսական փոխգործակցության ընդլայնման, հումանիտար ոլորտում փոխանակումների խթանման հարցերին, մտքեր փոխանակեցին հայ-վրացական հարաբերությունների օրակարգային մի շարք այլ հարցերի եւ դրանց լուծման ուղղությամբ ձեռնարկվող համատեղ քայլերի շուրջը:

Զրուցակիցներն անդրադարձան միջպետական սահմանի սահմանազատման գործընթացին, այդ նպատակով ստեղծված աշխատանքային խմբի գործունեությանը:

Բանակցությունների օրակարգում էին վիրահայությանը հուզող խնդիրները եւ դրանց լուծման նպատակով Վրաստանի իշխանությունների կողմից իրականացվող քայլերը:

Էդվարդ Նալբանդյանն ու Մայա Փանջիկիձեն քննարկեցին միջազգային կազմակերպություններում երկու երկրների փոխգործակցության, ԱԳՆ-երի ստորաբաժանումների միջեւ խորհրդատվությունների ժամանակացույցին վերաբերող հարցեր:

Հայաստանի եւ Վրաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարները մտքեր փոխանակեցին տարածաշրջանային խնդիրների շուրջը:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց նախարարների հաջորդ հանդիպումն իրականացնել մայիս ամսին:

ՏԱՐԵԴԱՐՁ

# Ռուսահայոց բարեկամության ասպետը




Ապրիլյան վառ ծաղկունքին՝ ապրիլի 15-ին կբոլորվի ռուսահայոց դարավոր բարեկամությունը միահյուսող Արա Աբրահամյանի ծննդյան 56-ամյակը: Դեռ վաղ պատանեկությունից եղեգնաձորցի տղայի մեջ մեծ սեր ու համակրանք է եղել ռուս ժողովրդի նկատմամբ: Եվ պատահական չէ, որ կյանքի ընկերուհի ընտրեց սիրունատես ռուս աղջկան: Աբովյանական պատգամը ռուս ժողովրդի հանդեպ սուրբ խրատ դարձավ հայրենասեր տղայի համար:

«Ով հայ ժողովուրդ, քո օրհասական պահին հայացքդ ուղղիր դեպի հյուսիս, դեպի ռուս մեծ ժողովուրդը...»: Եվ մեծ հայրենասերը զարգացրեց այս երկու ազգերի սերտ բարեկամությունը թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական, թե՛ արվեստի ու գրականության բնագավառներում:

Սակայն Արա Աբրահամյանը առավել ուշադիր ու հոգատար եղավ սոցիալապես անապահով մարդկանց նկատմամբ: Շուրջ 11 տարի է, որ նա հովանավորում է Երեւանի Արաբկիր շրջանի «Բարեգործական ճաշարանը», որը կրում է իր լուսահոգի ծնողների՝ «Արշավիր եւ Պայծառ Աբրահամյաններ հիմնադրամ» անունը: Ամեն առավոտ այստեղ հաճախող տարբեր տարիքի ու մասնագիտության տեր մարդիկ, երեխաներ, ինչպես նաեւ ռուսներ իրենց հոգում փայփայում են մի լուսաշող անուն՝ Արա Աբրահամյան, ով հուսալի հենարան է դարձել իրենց անապահով կյանքին: Այս գեղեցիկ առիթով նրանք իրենց հոգու ջերմ խոսքն ու երախտագիտությունն են հղում ռուսահայոց բարեկամության ասպետին, նրա ընտանիքին, նրա անթառամ, ծաղկուն գերդաստանին՝ ցանկանալով երկար ծաղկափթիթ գարուններ, առողջություն, իմաստալից, պայծառ կենսագրական նոր էջեր:

ՍԻՐԱՆՈՒՇ ՄՈՍՈՅԱՆ

***

«**Ազգ**»-ը շնորհավորում է պրն Արա Աբրահամյանին ծննդյան առաջիկա՝ 56-րդ տարեդարձի առթիվ եւ հաջողությունների հետ ցանկանում նրան երջանկություն եւ ազգային-հասարակական բեղուն գործունեություն:

# 2008-ի օգոստոսյան պատերազմը՝ Սաակաշվիլու հարցաքննության առարկա

Վրաստանի ներկայիս նախագահ Միխեիլ Սաակաշվիլու առնչությամբ վարչապետ Բիձինա Իվանիշվիլու «հաշվեհարդարային» մոտեցումները չեն սահմանափակվում կոռուպցիոն դրսեւորումների մասով քննություն իրականացնելով: Ավելի ծանր մեղադրանք կարող է հասցեագրվել Սաակաշվիլուն եւ նրա թիմակիցներին, քանի որ Վրաստանի կառավարությունը որոշել ու արդեն ձեռնամուխ է եղել 2008-ի օգոստոսյան պատերազմի հետաքննությանը:

Վրաստանի խորհրդարանը հատուկ հանձնաժողով է ստեղծում՝ ուսումնասիրելու 2008-ի օգոստոսյան պատերազմի ժամանակ Վրաստանի իշխանությունների քայլերը: Մինչ այդ էլ վարչապետ Բիձինա Իվանիշվիլին արդեն գուժել էր, թե Հարավային Օսիայի դեմ ռազմական գործողություններ սկսած իշխանությունները, այդ թվում՝ Սաակաշվիլին, պետք է հարցաքննվեն: Պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան էլ հաստատեց, որ 2008-ի իրադարձությունների հետաքննության մեկնարկը կլինի շուտով:

Կամաց-կամաց ահագնացող «մեղադրանքին» յուղ լցրեց նաեւ ժամանակին նույն Սաակաշվիլու հետ վարդյա հեղափոխություն իրականացնող Նինո Բուրջանաձեն՝ «պահանջելով հետաքննել 2008-ի օգոստոսյան իրադարձությունները», երբ Վրաստանը պատերազմի մեջ հայտնվեց Ռուսաստանի հետ, իսկ արդյունքում ոչ միայն ռուսաստանյան զորքերը հասել էին Թբիլիսիի մատույցներին, այլեւ Ռուսաստանը ճանաչեց Աբխազիայի եւ Հարավային Օսիայի անկախությունը:

Հետպատերազմյան շրջանում, անգամ որոշ միջազգային կառույցների ու պետությունների ղեկավարների մակարդակով հայտարարվեց, թե պատերազմը սանձազերծել էր Սաակաշվիլին, թեեւ ռուսներն էլ «առիթը բաց չթողեցին»:

Բուրջանաձեն, որ այժմ ներկայացնում է «Ժողովրդավարական շարժում» ընդդիմադիր կուսակցությունը, արձագանքել է Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ցուլուկիանիի հնչեցրած հայտարարությանը առ այն, որ անհրաժեշտ է հարցաքննել Վրաստանի նախագահին օգոստոսյան պատերազմի առնչությամբ: Ընդ որում, արդարադատության նախարարը նաեւ հայտարարել էր, որ մինչ Սաակաշվիլու հարցաքննությունը նա գուցե արդեն նախագահ չլինի:

Սրան ի պատասխան՝ որեւէ պարագայում թափանցիկության կողմնակից ներկայացող Սաակաշվիլին հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, թե այդ հետաքննությունը դեմ է պետականությանն ու պետությանը, եւ ինքն էլ չի պատրաստվում համագործակցել այդ համատեքստում: Բնականաբար, Սաակաշվիլու գնահատմամբ՝ Վրաստանը չէ, որ սկսել է ռազմական գործողությունները:

Ի հակադրություն այսօրինակ մոտեցման, երբ հնարավոր հետաքննությունը դիտարկվում է որպես Վրաստանի պետականության դեմ ուղղված քայլ, Վրաստանի ինտեգրման հարցերով ներկայիս պետնախարար Պաատա Զաքարեիշվիլին էլ գտնում է, որ օգոստոսյան պատերազմի մասին օբյեկտիվ հետաքննությունը կմեծացնի Վրաստանի նոր կառավարության հանդեպ աբխազների ու օսերի վստահությունը:

Վ. Պ.

# Դրամի արժեւորման ամիսներն են մոտենում

*Եթե չլինեն արտաքին միջավայրից եկող այլ ազդակներ*




Վերջին 10-15 օրերի ընթացքում դրամը նկատելիորեն արժեզրկվել է՝ 405-408 դրամ 1 դոլարի դիմաց միջակայքից 2-3 օրվա ընթացքում հասնելով 415-420 դրամի: Հետաքրքրական է, որ այդ օրերի ընթացքում դոլարի առուվաճառքի ծավալները սովորականից շատ չեն տարբերվել, հետեւաբար դժվար է ասել, թե նման տատանումը օբյեկտիվ գործոններով է պայմանավորված: Արտասովոր է, որ այդ օրերին ֆինանսական շուկայի վիճակի մասին որեւէ մեկնաբանություն Կենտրոնական բանկի նախագահից կամ լրատվական ծառայությունից նույնպես չեղավ: Նախկինում, երբ ԿԲ նախագահը ներկայիս վարչապետն էր, ֆինանսական շուկայում տեղի ունեցող կտրուկ փոփոխությունների ժամանակ ԿԲ լրատվական ծառայությունը հայտարարություն էր տարածում, նշում էր, որ խուճապի համար ոչ մի հիմք չկա, կոչ էր անում բնակիչներին զանգվածաբար արտարժույթի փոխանակումներ չանել եւ այլն: Ներկայումս տպավորությունն այնպիսին է, որ այլեւս նման ծառայություն ԿԲ-ն չունի կամ էլ ֆինանսական շուկան այլեւս գոյություն չունի կամ այնտեղ ոչինչ չի կատարվում: Ինչեւէ:

Որ դոլարի մեծ պահանջարկ չկա եւ մինչեւ 420 դրամին փոխարժեքի հասնելը լուրջ պատճառներ չունի եւ երկարաժամկետ չէ, վկայում է վերջին 1-2 օրվա դրամի փոխարժեքի փոքր-ինչ արժեւորելը: «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ»-ում փոխարժեքի վերջին ցուցանիշը 1 դոլարի դիմաց 417 դրամն էր: Դրամը գուցե ավելի արժեւորված լիներ, եթե այս տարվա մարտին, վերջին 3 տարիներին նկատվող իրանցի զբոսաշրջիկների զանգվածային հոսքը արձանագրվեր նաեւ այս տարի: Սակայն, միջազգային պատժամիջոցների հետեւանքով այդ երկրում բնակչության կենսամակարդակի անկումը այս տարի հնարավորություն չտվեց հազարավոր իրանցիների իրենց կրոնական տոնը՝ Նովրուզն անցկացնել Հայաստանում:

Սովորաբար գարնան վերջին եւ ամռան ամիսները դրամի արժեւորման ամենաբարենպաստ ամիսներն են: Գյուղատնտեսական բերքի առատությունն ու դրանց զանգվածային արտադրությունն ու վաճառքը հանգեցնում են ազգային արժույթի ամրապնդմանը: Թե մինչեւ ո՞ւր կարժեւորվի ազգային արժույթը, անհնար է ասել, բայց որ դա նկատելի կլինի, կարելի է ենթադրել: Ներկայումս միջազգային շուկայում եւս դոլարի փոխարժեքը եվրոյի նկատմամբ թուլանում է, հետեւաբար առկա է նաեւ արտաքին գործոնը դրամի արժեւորման համար: Եթե արտաքին միջավայրից չլինեն դոլարի ուժեղացման երեւույթներ, ապա դրամի հետագա արժեւորմանը ներքին պատճառներից ոչինչ չի խանգարի առաջիկա ամիսներին:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Եվս մեկ հետքայլ հայ-թուրքական հարաբերություններում

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Թուրքիան դարձել է գլխավոր դերակատար. տարածաշրջանային քաղաքականության եւ նրա արտաքին քաղաքականության շրջանակներն ընդգրկում են ոչ միայն Մերձավոր Արեւելքն ու Կովկասը, այլեւ Բալկաններն ու Եվրոպան (ՆԱՏՕ-ին հարելու միջոցով) եւ նույնիսկ Չինաստանը: Թուրքիայի վարչապետը դարձել է ոչ միայն Պաղեստինյան դատի պաշտպանը, որպեսզի պատրանքների գիրկը գցի արաբական աշխարհը, այլեւ` Չինաստանում ույգուրների իրավունքների:

Ույգուրները անհանգիստ մահմեդական փոքրամասնություն են Չինաստանում, որոնք ընդմիշտ հակամարտության մեջ են երկրի իշխանությունների հետ: Վերջին շրջանում տեղի ունեցած էթնիկական բռնկումների առնչությամբ Էրդողանը Չինաստանի կառավարությանը մեղադրեց նրանց (ույգուրների) դեմ ցեղասպանություն կատարելու մեջ:

Վարչապետ Էրդողանի այդ քայլը, ինչ խոսք, չվախեցրեց հզոր Չինաստանի կառավարությանը, բայց հավանաբար նպաստեց, որ Չինաստանն էլ ավելի մոտիկանա Հայաստանին:

Կովկասյան քաղաքականության շախմատի տախտակի վրա Հայաստանն իր չափերով, անշուշտ, որեւէ կերպ չի կարող մարտահրավեր նետել Թուրքիային: Բայց պատմությունը շատ ծանր կշիռ ունի Թուրքիայի մարտավարական ծրագրերի գործում: Մյուս հանգամանքը, որ Թուրքիան պարտավոր է հաշվի առնել, այն է, թե Հայաստանը, անկախ իր չափերից եւ զինվորական կարողություններից, ո՞ւմ հետ է դաշնակցում տարածաշրջանում տիրող ներկա սառը պատերազմի պայմաններում:

Քանի որ Թուրքիան վստահելի գործընկեր չէ իր դաշնակիցների համար, պետք է անընդհատ նորանոր խաբուսիկ քայլեր կատարի որոշ ժամանակ իր դաշնակիցներին մոլորության մեջ գցելու համար, որպեսզի այդ ընթացքում կարողանա ամրապնդել իր դիրքերը հեռագնա ծրագրերի համար: Այդ խաբուսիկ քայլերից մեկը վերջերս կայացած «ներողության խաղն» էր տարածաշրջանում իր երկարամյա դաշնակից Իսրայելի հետ: Չնայած վարչապետ Բենիամին Նաթանյահուն ներողություն խնդրեց Թուրքիայից «Մավի Մարմարայի» իրադարձությունների կապակցությամբ եւ խոստացավ փոխհատուցել զոհվածների ընտանիքներին, այդուհանդերձ, Իսրայելի քաղաքական շրջանակներում չեն հավատում, որ Թուրքիան կպահի փոխհամաձայնության իր խոստումը: Լրագրող Եփրաիմ Ինբարը «Ջերուսալեմ փոստ» թերթում «Թուրքիայից Իսրայելի ներողություն խնդրելը սխալ էր» վերնագրով մի խիստ զայրացկոտ հոդված էր գրել, որտեղ նշում էր, որ այդ ներողությունը «հազիվ թե կանգնեցնի Թուրքիայի վարչապետին` շարունակելու Իսրայելի դեմ իր հարձակումները եւ կամ ճանապարհ հարթի, որ Թուրքիան վերականգնի դիվանագիտական լիարժեք հարաբերությունները Իսրայելի հետ»:

Այս նույն ժամանակահատվածում Թուրքիայի ներքին կյանքում քրդական փոքրամասնությունն է, որ զոհ է դառնում նման խաբուսիկ քաղաքականության: Մինչ քրդերն իրենց զենքերը վայր են դնում որպես հետեւանք իրենց բանտարկված առաջնորդ Աբդուլլահ Օջալանի հետ երկրի վարչակազմի ցուցադրական բանակցությունների, Անկարայի կողմից ոչ մի կոնկրետ պարտավորվածություն չի հնչում կամ հայտարարվում:

Հայաստանն այդ խաբուսիկ քաղաքականության ամենածանր հարվածն է ստացել վերջին երկու տասնամյակների ընթացքում: Միջազգային իրավունքի աղաղակող խախտումով Թուրքիան շրջափակման մեջ է պահում Հայաստանին 1994 թվից, եւ ոչ մի ուժ աշխարհում չի կարողանում նույնիսկ նախատել նրան այդ անօրինական պահվածքի համար:

Բայց Թուրքիան իր հերթին շարունակում է համոզել միջազգային հանրությանը, որ ինքը նախաձեռնում է կայունություն եւ խաղաղություն հաստատել տարածաշրջանում: Այդ ուղղությամբ կատարված ամենաանհեթեթ քայլը արտգործնախարար Դավութօղլուի «Հարեւանների հետ զրոյական խնդիր» ունենալու հայտարարությունն էր, որը, շուտով պարզվեց, սոսկ դատարկ հռետորություն է: Եվ, չնայած Թուրքիայի «լավ մտադրությունները» այդ հարցում երբեք էլ կյանքի չկոչվեցին, աշխարհի առաջադեմ երկրների առաջնորդները Թուրքիայի հարեւաններին հորդորեցին օգտվել ընձեռված պատմական հնարավորությունից:

Թուրքիայի «լավ մտադրությունների» մեկ այլ արտահայտությունը հայտնի «արձանագրություններն» էին, որոնք պետք է դառնային Մ. Նահանգների նախկին պետքարտուղար Հիլարի Քլինթոնի ամենաթանկ նախաձեռնությունը: Իր կեղծավոր բնույթին հավատարիմ մնալով` Թուրքիան այդպես էլ չվավերացրեց այդ «արձանագրությունները», բայց մեծապես օգտվեց դրա շուրջը ստեղծված իրարանցումից:

Այս ոլորտի նորագույն միջադեպը Երեւան-Վան շաբաթական երկու թռիչքների չեղյալ հայտարարելն էր: Երեւութապես դրական թվացող այս ծրագիրը կասկածելի բնույթ էր կրում Հայաստանի համար: Ստեղծվել էր հիմնականում տնտեսապես մեկուսացնելու համար Թուրքիայի արեւելյան նահանգները (պատմական Հայաստանը): Այդ շրջանների կառավարիչները հսկայական ճնշումներ էին գործադրում, որ Հայաստանի հետ սահմանը բացվեր եւ որոշակի տնտեսական ակտիվություն մտցվեր տեղանքում: Անկարայի մտադրությունը Հայաստանին պատժելն էր` շրջափակման միջոցով: Ճիշտ է, դրանով սահմանի այն կողմի բնակչությունը եւս պատժվում էր, բայց դա չէր անհանգստացնում Անկարայի քաղաքագետներին, որովհետեւ այդ բնակչության մեծ մասը քրդեր են:

Հայերի համար 45-րոպեանոց այդ թռիչքն առիթ էր լինելու իրենց պապենական երկիրը այցելելու, բայց տնտեսական առումով այնքան էլ ձեռնտու չէր լինելու, քանի որ առանց այն էլ դեպի Անթալիա ինքնաթիռի էժան տոմսերը մրցակցությունից դուրս են մղել Հայաստանի եւ Վրաստանի առողջարանային վայրերում հանգստանալը: Այդուհանդերձ, ծրագիրը դրական զգացմունքներ, հույսեր էր արթնացրել, որ հայ-թուրքական հարաբերությունները դեպի լավն են գնում:

Իրադարձությունների զարգացումները ցույց տվեցին, որ թռիչքները չեղյալ համարվել են Ադրբեջանի ճնշման տակ, որի ապացույցն այն է, որ Ադրբեջանի արտգործնախարարության խոսնակ Էլման Աբդուլաեւը շնորհակալություն է հայտնել Անկարային: Նա ասել է. «Այս իրավիճակում խիստ կարեւոր է Ադրբեջանի ռազմավարական գործընկեր եղբայրական Թուրքիայի դիրքորոշումը: Կարեւոր է, որ Թուրքիան ճնշում գործադրի Հայաստանի վրա: Մենք մշտապես զգում ենք Թուրքիայի աջակցությունը եւ դրա համար շնորհակալություն ենք հայտնում Անկարային»:

Թուրքիան գուցե երբեք էլ նպատակ չուներ թույլատրելու այդ թռիչքները, բայց դրանց մասին հայտարարությունն անգամ որոշակի դիվիդենտներ բերեց նրան: Նախ մի անգամ եւս ցույց տվեց Թուրքիայի «լավ մտադրությունները»: Երկրորդ` չեղած տեղից հաղթանակ պարգեւեց Ադրբեջանին: Եվ երրորդ` Անկարան եւ Բաքուն միասին հաճույք ստացան, որ դրանով պատժեցին Հայաստանին:

Ադրբեջանը չի թաքցնում իր մտադրություններն ընդդեմ Հայաստանի: Բաքվի ծրագրերում Հայաստանը տարածաշրջանից դուրս վանելն է: Ալիեւն ինքն է հոխորտանքով հայտարարել, որ շարունակելու է «ազատագրել» Հայաստանի «օկուպացված» տարածքները եւ Հայաստանին դուրս է թողնելու տարածաշրջանի զարգացման ծրագրերից: Նա նաեւ նշել է քանիցս, որ Հայաստանը պատմական ադրբեջանական տարածքների վրա է հաստատված: Այս ծրագրերը իրականություն են դառնում մեծ տերությունների (Արեւմուտքի եւ Ռուսաստանի) կնքած գաղտնի համաձայնության միջոցով:

Վրդովեցուցիչն այն է, որ երբ Ադրբեջանը բացեիբաց սպառնում է Հայաստանի գոյությանը, ոչ մի կշտամբանք կամ անգամ նկատողություն չի հնչում ո՛չ ՄԱԿ-ի կենտրոնական գրասենյակից, ո՛չ էլ նրա անդամ երկրների կառավարություններից: Ամեն անգամ, երբ Ադրբեջանը խախտում է զինադադարի պայմանավորվածությունը, ԵԱՀԿ Մինսկի խումբը մի քաղաքավարի զգուշացում է հրապարակում` կոչ անելով կողմերին հեռու մնալ իրադրությունը սրելու քայլերից:

Թռիչքների չեղյալ համարելը կարելի է եզակի, աննշան գործողություն համարել, բայց իրականում դա Հայաստանը գոյությունից զրկելու առավել հեռագնա քաղաքականության խորհրդանշական արտահայտություն է:

**Դետրոյթ, ԱՄՆ**

**Թարգմ. Ն. Ծ.**

# Ստեփանակերտի օդանավակայանը եւ... Իլհամ Ալիեւի երրորդ ժամկետը

«Թուրան» գործակալությունը, հղում անելով «ԵԱՀԿ-ին մոտ դիվանագիտական աղբյուրին», տեղեկացրել է, որ «այս տարվա ամռան սկզբին հայկական կողմը ծրագրում է գործարկել «Խոջալուի» (չակերտները մերն են- Վ. Ա.) օդանավակայանը»: Ըստ այդմ, «հատկապես այդ պատճառով է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները ջանքեր են գործադրում` կողմերին զսպելու քայլերից, որ կարող են սրել իրավիճակը եւ հանգեցնել մարտական գործողությունների վերսկսման» (տես` http://www.contact.az/docs/2013/Politics/041100034361ru.htm):

Նույն «աղբյուրի» ասելով` «ԵԱՀԿ-ն եւ առհասարակ Արեւմուտքը հնարավորություւն չեն տեսնում, որ Երեւանին ստիպեն հրաժարվելու այդ ծրագրից, ինչպես նաեւ չունեն լծակներ, որպեսզի Բաքվին զսպեն օդանավակայանին եւ քաղաքացիական օդանավերին հարվածելուց»: Ադրբեջանական լրատվամիջոցը, շարունակելով «դիվանագիտական աղբյուրի» միտքը, գրում է, որ ներկա իրավիճակում միջնորդներին եւ Մինսկի խմբի երկրների առաջնորդներին «ոչինչ չի մնում, քան հաշվարկել հակամարտության կողմերի հաջորդող քայլերը, ինչպես նաեւ լայնածավալ պատերազմի վերսկսման դեպքում իրենց սեփական գործողությունները, քանի որ այդ հարցում միջազգային հանրությունը միասնական գիծ կամ հայեցակարգ չունի» (նույն տեղում):

Այնուհետեւ «դիվանագիտական աղբյուրը» կարծիք է հայտնել, թե «Հայաստանը կարող է գիտակցաբար իրավիճակը սադրել, որպեսզի կանխի Ադրբեջանի ռազմական օպերացիան եւ նրան անպատեհ հարված հասցնելու առավելություն չտալ»: Մինչեւ այս պահը «Թուրան»-ի տեղեկատվությունը, որքան էլ ինտրիգային, առաջին հայացքից կարող է թողնել «հավաստիությանը մոտ» տպավորություն: Արդեն «միայն» լրատվամիջոցի կողմից արված ընդհանրացումը, սակայն, արագորեն բացում է վարագույրը:

- Արժե ընդգծել,- գրել է «Թուրան»-ը,- որ հարցն Իլհամ Ալիեւի համար կարող է ունենալ առանցքային նշանակություն... Եթե նա «կուլ տա» եւ թույլատրի «Խոջալուի» (չակերտները մերն են- Վ. Ա.) օդանավակայանի գործարկումը, դա կարող է ուժեղ ազդել նրա վարկանիշին: Այդ պատճառով էլ իրավիճակը սրելուն ուղղված քայլերը կբարձրացնեն նրա հեղինակությունը:

«Թուրան» գործակալությունը գերազանցապես սպասարկում է «Մուսավաթ» կուսակցության քաղաքական շահերը: Ուստի ենթադրելի է, որ «ԵԱՀԿ-ին մոտ կանգնած դիվանագիտական» ոչ մի աղբյուր էլ Ստեփանակերտի օդանավակայանը «ամռվա սկզբին շահագործելու» մասին ոչինչ էլ չի ասել: Դա ԵԱՀԿ ՄԽ համանախագահների` օրերս տարածաշրջանային այցի արդյունքով Վիեննայում տարածած հայտարարությունից յուրովի քաղած տեղեկատվություն է:

Միջնորդները խոսել են այն մասին, որ «դեպի Լեռնային Ղարաբաղ եւ հակառակ ուղղությամբ թռիչքների կազմակերպման հնարավորությունը» նույնպես քննարկման առարկա է եղել, ինչպես նաեւ ընդգծել, որ կողմերը «հավաստել են խնդրի խաղաղ կարգավորմանն իրենց հավատարմությունը»:

Համադրելով այս երկու գաղափարները` «Թուրան»-ի մեկնաբանները եզրակացության են եկել, որ միջազգային հանրությունը, ի դեմս ԵԱՀԿ ՄԽ համանախագահ երկրների, Ստեփանակերտի օդանավակայանի գործարկմանն սկզբունքորեն դեմ չէ, դա չի համարում «անօրինական» կամ «բանակցությունների հաջողությանը խոչընդոտ», ինչպես պնդում է պաշտոնական Բաքուն:

Քաջ գիտակցելով, որ Իլհամ Ալիեւը որեւէ ռեսուրս չունի` դիմադրելու միջազգային հանրության տեսակետին, ադրբեջանական արմատական ընդդիմությունն, այսպիսով, «Թուրան» գործակալության խողովակն է օգտագործել` հղելու սպառնալիք, որ Ստեփանակերտի օդանավակայանը գործարկելու իրողությունը «կուլ տալու» դեպքում նրան «լավ օրեր չեն սպասում»: Ադրբեջանական ընդդիմության ամենացայտուն դեմքը` «Մուսավաթ»-ի առաջնորդ Իսա Ղամբարը նման հիստերիկ քայլերի հարուստ փորձ ունի դեռեւս խորհրդային ժամանակներից:

Շատ հնարավոր է, որ նա հաշվարկել է խաղալ Իլհամ Ալիեւի «արժանապատվության» վրա` մղելով ոչ օրդինար գործողությունների, որպեսզի սրված իրավիճակում հնարավոր դառնի իշխանափոխությունը: Չէ՞ որ մեկ անգամ նա, որպես ԱԺՃ առաջնորդներից, կարողացել է Այազ Մութալիբովին սադրել` պատերազմ սանձազերծելու ԼՂՀ դեմ, եւ հասել նրա տապալմանն ու «դեմոկրատական ուժերի» կողմից իշխանության յուրացմանը: Խնդիրն այն է, թե պատրա՞ստ է, արդյոք, Իլհամ Ալիեւը «երկրորդ անգամ ոտք դնելու միեւնույն ջրում», թե՞ նրա համար գերադասելի է «նվաստացումը կուլ տալու գնով» պահել սեփական «գահը»` որոշ ժամանակ անց որդուն «թագադրելու» մեծ հեռանկարով:

**Վ. Ա.**

# Ադրբեջանում սաստկանում են երիտասարդության եւ կրոնասերների հալածանքները

## *Ղրանք այնքան աղաղակող են դարձել, որ եղբայրական Թուրքիայում դատապարտում են*

Ատելությունը բումերանգի հատկություն ունի: Սերմանում ես այլ ժողովրդի նկատմամբ, վերադառնում է սեփական հասարակություն, որտեղ խթանում է բռնությունը, պայմանավորում «բռնության կուլտուրայի» ձեւավորումը եւ բռնությունը պաշտամունքի առարկա է դարձնում հասարակական անդամների համար: Թերեւս այդ պաշտամունքի արտահայտությունը պետք է համարել հայ սպանելու համար ստոր մարդասպանի ազգային հերոս հռչակումը ադրբեջանական հասարակության մեջ:

Հայատյացության առումով Ադրբեջանի հասարակությունը միանգամայն համերաշխ է իշխանությունների հետ: Քանի որ դրա տարածման առաջադրանքը իբրեւ սրբազան պարտք իշխանություններն են ստանձնել, ուստի ատելությունը բռնության տեսքով վերադառնում է Բաքվի իշխանություններին, որոնք էլ դա կիրառում են Ադրբեջանի հասարակության դեմ:

Այսինքն` Ադրբեջանում իշխանությունները վերածել են բռնատիրության: Թեեւ հայկական ասացվածքն ասում է. «Շունը` շնից, երկուսը` մի տնից», բայց եւ այնպես, ադրբեջանական իշխանությունների բռնությունը երկրում այնքան աղաղակող են դարձել, որ թուրքական «Դունյա Բյուլտենի» լրատվական գործակալությունը հարկ է համարել վերլուծականով անդրադառնալու դրանց:

Ահա թե ինչ է գրել այս գործակալությունը ապրիլի 6-ի վերլուծականում. «Նախագահական ընտրությունների նախօրյակին Ադրբեջանում սրվում է ներքաղաքական լարվածությունը: Երկրում 1993-ից ի վեր իշխող «Նոր Ադրբեջան» կուսակցությունը ընդդիմության կողմից ճնշումները ուժեղացնում է նաեւ կրոնասերների եւ սոցիալական մեդիայի ակտիվիստ երիտասարդների վրա: Սկսել է սոցիալական ցանցում իշխանությունների քննադատողների եւ Մերձավոր Արեւելքի ժողովրդական շարժումներն աջակցողների ձերբակալությունը:

Դպրոցներում գլխաշորի արգելումից հետո սկզբնավորված հոգեւորականների եւ կրոնասերների հալածանքը թեւակոխել է նոր շրջափուլ: Երկրում ձերբակալում են ոչ միայն ցույցի մասնակիցներին, այլեւ մասնավոր հավաքներում գլխաշորի արգելման դեմ արտահայտվողներին:

Վերջին օրերին երկրի օրակարգը զբաղեցրել է աստվածաբան Թալեհ Բաղիրզադեի ձերբակալությունը: Բաղիրզադեն մեղադրվել էր թմրանյութ պահելու, իսկ նրա վարորդը` ապօրինի զենք կրելու մեջ: Մինչդեռ, հավատացյալները կարծում են, որ նա ձերբակալվել է Աբբասի մզկիթում կարդացած քարոզի համար: Հիշեցնենք, որ Բաղիրզադեն մեկ այլ հոգեւորականի հետ առաջին անգամ գլխաշորի արգելքի դեմ ցույցեր կազմակերպելու մեջ մեղադրվել եւ մեկուկես տարով բանտարկության էր դատապարտվել: Պատիժը կրելուց 4 ամիս հետո նրա վերստին ձերբակալությունը պատճառ դարձավ, որ հավատացյալ մահմեդականները բողոքի ցույցերով լցվեն փողոցները:

Սոցիալական մեդիայի ակտիվացումն ու այդ ակտիվության վերաճումը ցույցերի, իշխանություններին դրդում է դիմել կանխարգելիչ միջոցների: Օրինակ` իշխող կուսակցության պատգամավոր Սիավուշ Նովրուզովը կոչ էր արել վերահսկել ֆեյսբուքը եւ երկրում սահմանափակել ինտերնետի օգտագործումը: Իսկ Ֆիզաիլ Աղդամլին էլ առաջարկել է առհասարակ փակել սոցիալական ցանցերը` պատճառաբանելով, թե ֆեյսբուքը վտանգավոր է:

«Ազադլիգ» թերթի գլխավոր խմբագիր Ղանիմաթ Զահիդը ուշադրություն հրավիրեց քաղաքական միջոցառումների կանխարգելման նպատակով երիտասարդների դեմ գործադրվող ճնշումների սաստկացման վրա: Նա ասաց. «Կառավարությունը մտադիր է արգելել բանակում զինծառայողների սպանությունը դատապարտելու նպատակով կազմակերպվող ցույցերը: Երիտասարդներին փրկելու միակ միջոցը հասարակության միասնական գործունեությունն է»:

Իշխանությունները սկսել են ակտիվ երիտասարդներին աջակցելու ու ֆինանսական միջոցներ տրամադրելու մեջ մեղադրել արեւմտյան երկրներին եւ հատկապես ԱՄՆ-ին: Մեղադրվող արեւմտյան հաստատությունների մեջ առանձնանում է ԱՄՆ-ի Ազգային դեմոկրական ինստիտուտը, պատճառաբանելով, թե միջամտում է Ադրբեջանի ներքին գործերին: Ադրբեջանի գլխավոր դատախազ Զաքիր Գարալովը պաշտոնական նամակով դիմել է Բաքվի ամերիկյան դեսպանություն եւ զգուշացրել, որ այս ինստիտուտը ոտնահարում է երկրի օրենքները: Ի պատասխան դրան, դեսպանատնից նշել են, որ Ազգային դեմոկրատական ինստիտուտի աշխատանքներն ուղղված են Ադրբեջանում ժողովրդավարության զարգացմանը»:

Հ. ԶԱՔԱՐՅԱՆ

# Սալամ Ֆայյադի պաշտոնաթողությունը հետաձգվում է



Պաղեստինյան «Մաան», ֆրանսիական «Ֆրանսպրես» եւ միջազգային «Ռոյթեր» գործակալությունները, պաշտոնական աղբյուրներ վկայակոչելով, ապրիլի 12-ին հաղորդեցին, որ Պաղեստինյան ինքնավարության վարչապետ Սալամ Ֆայյադի պաշտոնաթողությունը «հետաձգվում է անորոշ ժամկետով»:

Հիշյալ աղբյուրների տվյալներով, հինգշաբթի երեկոյան Ֆայյադը պետք է հանդիպում ունենար Պաղեստինյան ինքնավարության նախագահ Մահմուդ Աբբասի հետ, որպեսզի քննարկեր իր պաշտոնաթողության հարցը: «**Ազգը**» իր հերթին երեկ հաղորդել էր Ֆայյադի գրած հրաժարականի դիմում մասին, նշելով, որ Աբբասի պատասխանը դեռ հայտնի չէ: Արդ, պաշտոնապես հայտնի է, որ Աբբաս-Ֆայյադ հանդիպումը չի կայացել: Հիշյալ գործակալությունները ընդգծում են, որ ԱՄՆ-ը դեմ է Ֆայյադի պաշտոնաթողությանը:

Օրերս Մերձավոր Արեւելք կատարած այցելության ժամանակ նախագահ Բարաք Օբաման բարձր գնահատական էր տվել Ֆայյադի գործունեությանը: Վերջինիս պաշտպանությամբ հանդես էր եկել նաեւ ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրին: Սպիտակ տան աղբյուրները քանիցս հաստատել են, որ Ֆայյադը ԱՄՆ-ի հանդեպ առավել բարեկամաբար տրամադրված պաղեստինցի քաղաքական գործիչն է:

Ֆայյադի պաշտոնաթողությունը կհանգեցներ Արեւմուտքի երկրներից Պաղեստինին հատկացվող ֆինանսական օգնության նկատելի կրճատմանը: Մյուս կողմից, նրա հեռանալը կարող էր բարելավել Աբբասի հարաբերությունները Քաթարի եւ «պաղեստինյան Դիմադրությանը» հովանավորող մյուս երկրների հետ:

Վարչապետ Ֆայյադի հրաժարականի դիմում պատճառը նրա եւ Մահմուդ Աբբասի տարաձայնություններն են:



# Եվրոպան Կիպրոսին հորդորում է վաճառել ոսկու պաշարը

Եվրոհանձնաժողովը Կիպրոսին հորդորում է սեփական ոսկու պաշարի մեծ մասը վաճառել 400 մլն եվրո գումար հայթայթելու համար: BBC-ն նշում է, որ ոսկու ներկայիս գների պայմաններում կղզին ստիպված կլինի իր 13,9 տոննա պաշարից վաճառել 10,36 տոննան:

Եթե ոսկին իրացվի, դա կլինի վերջին չորս տարում աշխարհում թանկարժեք մետաղի խոշորագույն միանվագ վաճառքը: 2009-ին Ֆրանսիայի Կենտրոնական բանկը շուկա էր հանել 17,4 տոննա ոսկի:

Եվրոպայում ճգնաժամի մեջ հայտնված մեծ երկրները ունեն ոսկու զգալի պաշարներ: Այսպես, Պորտուգալիայի պաշարը 382,5 տոննա է, Իսպանիայինը` 281,6 տոննա: Այս ցուցանիշով աշխարհում 4-րդ տեղը զբաղեցնող Իտալիան ունի 2,451 հազար տոննա:

Ոսկու վաճառքը կարող է դառնալ Կիպրոսին Եվրոմիության օգնության հատկացման պայմաններից մեկը: Կղզուն անհրաժեշտ է 23 մլրդ եվրո, որի մեծ մասը Նիկոսիան ստիպված կլինի ինքնուրույն հայթայթել:

# Սիրիացի ապստամբներն ԱՄՆ-ից կստանան 10 մլն դոլար

## *Ապստամբները մտել են Քամիշլի*



Նախագահ Բարաք Օբաման ապրիլի 12-ին կարգադրել է 10 մլն դոլար օգնություն հատկացնել սիրիացի ապստամբներին, հաղորդում է Ֆրանսպրեսը:

Նախատեսվում է միջոցներն օգտագործել կառավարական զորքերի դեմ կռվող «Սիրիայի ազատ բանակի» համար պարեն (չոր օրապահիկ) եւ դեղորայք (դաշտային դեղարկղիկներ) ձեռք բերելու նպատակով:

Իր որոշումը մեկնաբանելով` Օբաման հայտարարել է, որ Սիրիայի հակամարտությունը հասել է «վճռական փուլին», ուստի անհրաժեշտ է ամեն ինչ անել, որպեսզի այդ երկիրը դառնա մի վայր, որտեղ կհարգվեն բոլոր բնակիչների իրավունքները:

Օգնության 10 միլիոնի փաթեթը կգումարվի ավելի վաղ հատկացված 117 մլն դոլարին, որն ապստամբներին հատկացրել էր «ոչ մահաբեր հանդերձանքի» (զրահաժիլետներ, ռադիոկայաններ, գիշերային դիտման սարքեր, օպտիկական նշանոցներ եւ այլն) ձեռքբերման նպատակով:

Բացի դրանից, ԱՄՆ-ը 385 մլն դոլար օգնություն է տրամադրել Թուրքիայում, Իրաքում, Հորդանանում եւ Լիբանանում ապաստանած սիրիացի փախստականներին: ՄԱԿ-ի տվյալներով, նրանց թիվն անցնում է 1,2 միլիոնից:

Պաշտոնապես ԱՄՆ-ը զենք չի մատակարարում սիրիացի ապստամբներին, բայց հայտնի է, որ ԿՀՎ-ն օգնում է, որպեսզի երրորդ երկրներում սաուդցիների եւ քաթարցիների գնած զենքը հասնի ապստամբներին: Բացի դրանից, ամերիկացի հրահանգիչները սիրիացի ապստամբներին մարզում են Հորդանանի ճամբարներում:

Երեկ հետմիջօրեին «Ալ Արաբիա» հեռուստաալիքը հաղորդեց, որ ապստամբները ներխուժել են Սիրիայի հյուսիս-արեւելքում գտնվող Քամիշլի քաղաք, որն առավելապես բնակեցված է քրդերով:

# Ֆրանսիայի գլխավոր ռաբբին հեռացավ գրագողության պատճառով



Ֆրանսիայի գլխավոր ռաբբի Բեռնհեյմը հրաժարական է տվել գրագողության հետ կապված սկանդալի պատճառով: Այդ մասին հաղորդում է «Լիբերասիոն» թերթը, ինչպես նաեւ իսրայելական «Հաարեցը»:

Ապացույցների ճնշման ներքո ռաբբին ստիպված խոստովանել է, որ ինքը ուրիշ հեղինակներից «փոխ է առել» էական հատվածներ, որպեսզի գրի իր «Քառասուն խոկում հուդայական պրակտիկայում» գիրքը եւ այլ աշխատություններ:

Բեռնհեյմը ափսոսանք է արտահայտել իր արարքի համար, ընդունելով դրա բարոյական վնասակարությունը:

Պաշտոնաթող ռաբբին նաեւ խոստովանել է, որ 37 տարի առաջ փիլիսոփայության բնագավառում իր իբր ստացած գիտական աստիճանը իրականում կեղծիք է:

Բեռնհեյմը մերկացվել էր ֆրանսիացի բլոգերների (անհաս կայքատերերի) ջանքերի շնորհիվ, որոնք ռաբբիի գրվածքներում գտել էին կասկածելիորեն շատ զուգադիպություններ ուրիշ հեղինակների աշխատանքների հետ: Սկզբում Բեռնհեյմը մերժել էր հրաժարական տալու պահանջը եւ ամբողջ մեղքը բարդել էր իր փոխարեն գրքի մի մասը գրած ուսանողի վրա, բայց հասարակայնության եւ գործընկերների ճնշման ներքո վերջ ի վերջո ստիպված թողել էր պաշտոնը: Ֆրանսիայի ռաբբիների խորհուրդը երկրի գլխավոր ռաբբիի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակել երկու կրոնական հեղինակությունների:

***"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ, ք.Երեւան, Կալենցի 11***
***Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվություն***
***2012թ. Դեկտեմբերի 31***

*Հազար ՀՀ դրամ*

| | Հաշվետու ժամանակաշրջան | Նախորդ ժամանակաշրջան (ստուգված/ չստուգված) |
|---|---|---|
| Տոկոսային եւ նմանատիպ եկամուտներ | 1,663,685 | 1,478,601 |
| Տոկոսային եւ նմանատիպ ծախսեր | (228,126) | (174,992) |
| Զուտ տոկոսային եկամուտ | 1,435,559 | 1,303,609 |
| Արտարժութային գործարքներից զուտ շահույթ/(վնաս) | (52,905) | (1,269) |
| Այլ գործառնական եկամուտներ | 26,238 | 180,973 |
| Այլ գործառնական ծախսեր | (14,776) | (21,551) |
| Զուտ կոմիսիոն եւ այլ եկամուտ | 1,394,116 | 1,461,762 |
| Վարկերից եւ այլ փոխառություններից առաջացած կորուստներ | (67,865) | (35,657) |
| Ընդհանուր վարչական ծախսեր | (731,861) | (572,721) |
| Շահույթ մինչեւ հարկումը | 594,390 | 853,384 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 129,646 | 171,082 |
| Ժամանակաշրջանի Շահույթ | 464,744 | 682,302 |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունք | - | - |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո | - | - |
| Համապարփակ ֆինանսական արդյունք, այդ թվում | 464,744 | 682,302 |
| Մայր կազմակերպության բաժնեմաս | - | - |
| Չվերահսկվող բաժնեմաս | - | - |

***Տնօրեն՝*** ***Գլխավոր հաշվապահ՝***
***Գ. Վարդանյան*** ***Ա. Սահակյան***

**"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ, ք.Երեւան, Կալենցի 11**
**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն**
**2012թ. Դեկտեմբերի 31**

*Հազար ՀՀ դրամ*

| | Կանոնադրական կապիտալ | Լրացուցիչ կապիտալ | Գլխավոր պահուստ | Չբաշխված շահույթ/ վնաս | Ընդամենը սեփական կապիտալ |
|---|---|---|---|---|---|
| **Նախորդ ժամանակաշրջան** | | | | | |
| Մնացորդը առ 2010թ. Դեկտեմբերի 31 | 180,000 | 280,857 | | 167,008 | 627,865 |
| Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝ | 320,000 | | | | 320,000 |
| Ներդրումներ կանոնադրական կապիտալում եւ կանոնադրական կապիտալի այլ աճ | 320,000 | | | | 320,000 |
| Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված եւ շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | | | |
| Համապարփակ եկամուտ | | | | 682,302 | 682,302 |
| Շահութաբաժիններ | | | | | |
| Զուտ շահույթ/վնաս | | | | | |
| Բաժնետիրոջից շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն ստանալու արդյունք՝ առանց հետաձգված հարկի | | 1,194,125 | | | 1,194,125 |
| Մնացորդը առ 2011թ. Դեկտեմբերի 31 | 500,000 | 1,474,982 | | 849,310 | 2,824,292 |
| **Հաշվետու ժամանակաշրջան** | | | | | |
| Մնացորդը առ 2011թ. Դեկտեմբերի 31 | 500,000 | 1,474,982 | | 849,310 | 2,824,292 |
| Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝ | 1,500,000 | | | | 1,500,000 |
| Ներդրումներ կանոնադրական կապիտալում եւ կանոնադրական կապիտալի այլ աճ | 1,500,000 | | | | 1,500,000 |
| Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված եւ շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | | | |
| Համապարփակ եկամուտ | | | | 464,744 | 464,744 |
| Շահութաբաժիններ | | | | | |
| Զուտ շահույթ/վնաս | | | 42,465 | (42,465) | |
| Բաժնետիրոջից շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն ստանալու արդյունք՝ առանց հետաձգված հարկի | | (624,578) | | | (624,578) |
| Այլ բաշխումներ | | | | (28,922) | (28,922) |
| Մնացորդը առ 2012թ. Դեկտեմբերի 31 | 2,000,000 | 850,404 | 42,465 | 1,242,667 | 4,135,536 |

***Տնօրեն՝*** ***Գլխավոր հաշվապահ՝***
***Գ. Վարդանյան*** ***Ա. Սահակյան***

***"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ, ք.Երեւան, Կալենցի 11***
***Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվություն***
***2012թ. Դեկտեմբերի 31***

*Հազար ՀՀ դրամ*

| | Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ | Նախորդ տարվա վերջի դրությամբ |
|---|---|---|
| **Ակտիվներ** | | |
| Դրամական միջոցներ եւ բանկային հաշիվներ | 217,646 | 247,236 |
| Բանկերում տեղաբաշխված միջոցնե | 306,313 | 1,076,777 |
| Հաճախորդներին տրված վարկեր եւ այլ փոխատվություններ | 6,890,601 | 4,632,359 |
| Հիմնական միջոցներ եւ ոչ նյութական ակտիվներ | 83,323 | 72,558 |
| Այլ ակտիվներ | 23,784 | 32,963 |
| Ընդամենը ակտիվներ | 7,521,667 | 6,061,893 |
| **Պարտավորություններ** | | |
| Ստացված վարկեր, փոխառություններ | 3,092,661 | 2,405,054 |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ | 96,112 | 139,465 |
| Պահուստներ | 41,508 | 28,794 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 136,673 | 366,970 |
| Այլ պարտավորություններ | 19,177 | 297,318 |
| Ընդամենը պարտավորություններ | 3,386,131 | 3,237,601 |
| **Կապիտալ** | | |
| Կանոնադրական կապիտալ | 2,000,000 | 500,000 |
| Լրացուցիչ կապիտալ | 850,404 | 1,474,982 |
| Գլխավոր պահուստ | 42,465 | - |
| Կուտակված շահույթ | 1,242,667 | 849,310 |
| Ընդամենը կապիտալ | 4,135,536 | 2,824,292 |
| Ընդամենը պարտավորություններ եւ կապիտալ | 7,521,667 | 6,061,893 |

***Տնօրեն՝*** ***Գլխավոր հաշվապահ՝***
***Գ. Վարդանյան*** ***Ա. Սահակյան***

***"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ, ք.Երեւան, Կալենցի 11***
***Դրամական միջոցների հոսքերի մասին միջանկյալ հաշվետվություն 2012թ. Դեկտեմբերի 31***

*Հազար ՀՀ դրամ*

| | Հաշվետու ժամանա-կաշրջան | Նախորդ ժամանա-կաշրջան |
|---|---|---|
| 1. Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից | (1,215,912) | (1,686,184) |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր մինչեւ գործառնական ակտիվների եւ պարտավորությունների փոփոխությունը | 554,340 | 610,598 |
| Ստացված տոկոսներ | 1,407,407 | 1,175,060 |
| Վճարված տոկոսներ | (119,800) | (47,357) |
| Ստացված տույժեր եւ տուգանքներ | 16,211 | 9,211 |
| Վճարված աշխատավարձ եւ դրան հավասարեցված այլ վճարումներ | (384,550) | (307,070) |
| Վճարված հարկեր | (364,928) | (219,246) |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական ակտիվների եւ պարտավորությունների փոփոխություններից | (1,770,252) | (2,296,782) |
| Տեղաբաշխված միջոցների նվազում (ավելացում) | (1,291,971) | (3,015,018) |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից | (478,281) | 718,236 |
| 2. Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից | (35,451) | (74,983) |
| Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (35,451) | (74,983) |
| 3. Դրամական միջոցների զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից | 1,211,447 | 1,554,438 |
| Ստացված վարկերի/փոխառությունների ավելացում (նվազում) | 1,240,369 | 1,554,438 |
| Բաշխումներ | (28,922) | - |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների եւ դրանց համարժեքների վրա | 10,326 | (4,921) |
| Դրամական միջոցների զուտ հոսք | (29,590) | (211,650) |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում | 247,236 | 458,886 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում | 217,646 | 247,236 |

***Տնօրեն՝*** ***Գլխավոր հաշվապահ՝***
***Գ. Վարդանյան*** ***Ա. Սահակյան***

**"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ, ք.Երեւան, Կալենցի 11**
**Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվություն**
**2012թ.** ***Դեկտեմբերի 31***

*Հազար ՀՀ դրամ*

| Նորմատիվներ | Փաստացի մեծությունը | Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը | Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը |
|---|---|---|---|
| Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը | 2,000,000 | 150,000 | խախտում առկա չէ |
| Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը | 3,439,358 | 150,000 | խախտում առկա չէ |
| Ընդհանուր կապիտալի եւ ռիսկով կշռված ակտիվների գումարների միջեւ նվազագույն հարաբերակցությունը (Ն1 նորմատիվ) | 47.7% | 10.0% | խախտում առկա չէ |
| Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը (Ն3 նորմատիվ) | 0.8% | 25.0% | խախտում առկա չէ |

***Տնօրեն՝*** ***Գլխավոր հաշվապահ՝***
***Գ. Վարդանյան*** ***Ա. Սահակյան***

---

Հայաստանի Հանրապետություն
«Էկոնոմիկս-Աուդիտ»
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
Աուդիտորական ծառայությունների իրականացման Լիցենզիա ԱԾ N 085
Տրված՝ 15.12.2010 թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից
Ք. Երեւան, Խանջյան 47/8, Կորյունի 7/1 9,
Հեռ./Tel/թջջ. 094-40-99-80, 010-54-09-08, 010-58-01-71

ECONOMICS AUDIT

**Անկախ աուդիտորի եզրակացություն**
**«ԱՐՇԱԿ եւ ԼՈՒՍԻՆԵ» ՍՊԸ**
**2012 թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ**
**Հասցեատերը՝**
**«ԱՐՇԱԿ եւ ԼՈՒՍԻՆԵ» ՍՊԸ մասնակիցներին**

Մեր կողմից իրականացվել է «ԱՐՇԱԿ եւ ԼՈՒՍԻՆԵ» ՍՊԸ՝ կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ բաղկացած հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագրից եւ այլ բացատրական տեղեկատվությունից:

**Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման եւ ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումներից:

**Աուդիտորի պատասխանատվությունը**

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է բավարարել բարոյական վարքի կանոնները, պլանավորել եւ անցկացնել աուդիտը՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների եւ սխալների հետեւանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման եւ ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների եւ ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

**Կարծիքի ձեւափոխման հիմքեր**

Մեր կարծիքի ձեւափոխման համար հիմք է հանդիսացել այն, որ կազմակերպության անընդհատ գործելու ենթադրությունը կարող է տեղի չունենալ, քանի որ բավականին մեծ է կազմակերպության հետագա գործունեության չշարունակելու ռիսկը, կապված «Շահումով խաղերի եւ խաղատների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի փոփոխության կիրառման եւ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 14.2 կետով նախատեսված պետական տուրքի վճարումների ավելացման հետ: Միաժամանակ Մենք չենք հետեւել ու չենք մասնակցել ընկերության տարեկան գույքագրման աշխատանքներին, առկա են հասույթի հիմնավորման եւ հաշվառման առանձնահատկություններ, եւ Մենք անկարող էինք արժանահավատորեն չափել հնարավոր անճշտությունների ծավալները, եթե կլինեն այդպիսիք ու որոշել այդ անճշտությունների ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա:

**Ձեւափոխված կարծիք**

Մեր կարծիքով, բացառությամբ Կարծիքի ձեւափոխման հիմքեր պարագրաֆում նկարագրված հարցերի հնարավոր ազդեցության, «ԱՐՇԱԿ եւ ԼՈՒՍԻՆԵ» ՍՊԸ կից, ֆինանսական հաշվետվությունները տալիս են 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ֆինանսական վիճակի, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների եւ դրամական միջոցների հոսքերի՝ ճշմարիտ եւ իրական պատկերը, համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի:

*«Էկոնոմիկս Աուդիտ» ՍՊԸ*
*Հասցեն՝ ք. Երեւան, Կորյունի 7/1, 9*
***Տնօրեն*** ***Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ***
***Աուդիտոր*** ***Վ. ՀՈՎՍԵՓՅԱՆ***
***18 փետրվարի, 2013 թ.***

---

| | |
|---|---|
| *Կազմակերպության անվանումը* | *"ԱՐՇԱԿ եւ ԼՈՒՍԻՆԵ" ՍՊԸ* |
| *Փաստացի գործունեության տեսակը* | *Շխ -203* |
| *Պետական ռեգիստրի գրանցման համարը* | *282.04000497* |
| *ՀՎՀՀ* | *00814094* |
| *Գտնվելու վայրը* | *ք.Երեւան Մյասնիկյան պող.4շ բն.11* |
| *Փաստացի գործունեության հասցեն* | *Արարատի մ.,Արգավանդ գ.,փող.Իսակով թիվ 4 խանութի մի մաս* |

**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն**

| Հազար դրամ | 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Ակտիվներ | | |
| Ոչ ընթացիք ակտիվներ | | |
| Հիմնական միջոցներ | 1271 | 1950 |
| Ոչ նյութական ակտիվներ | 1250 | 1250 |
| Տրված փոխառություններ | | |
| Ընթացիկ ակտիվներ | | |
| Պաշարներ | | |
| Առեւտրային եւ դեբիտորական պարտքեր | 164 | 224 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 10343 | 5644 |
| Ընդամենը ակտիվներ | 13028 | 9068 |
| Սեփական կապիտալ եւ պարտավորություններ | | |
| Կապիտալ եւ պահուստներ | | |
| Կանոնադրական կապիտալ | 50 | 50 |
| Կուտակված շահույթ | 12978 | 9014 |
| Պահուստային Կապիտալ | | |
| Ոչ ընթացիկ պարտավորություններ | | |
| Վարկեր | | |
| Ընթացիկ պարտավորություններ | | |
| Առեւտրային եւ այլ կրեդիտորական պարտքեր | | 4 |
| Վարկեր | | |
| Ընդհանուր սեփական կապիտալ եւ պարտավորություններ | 13028 | 9068 |

***Տնօրեն*** ***Պ. ՄԻՆԱՍՅԱՆ***
***Գլխ. Հաշվապահ*** ***Ա.ՍԻՄՈՆՅԱՆ***

**Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն**

| Հազար դրամ | 2012 | 2011 |
|---|---|---|
| Հասույթ | 52240 | 47157 |
| Վաճառքի ինքնարժեք | -41132 | -36947 |
| Համախառն շահույթ | 11108 | 10210 |
| Այլ եկամուտ | | |
| Իրացման ծախսեր | | |
| Վարչական ծախսեր | -7144 | 6378 |
| Այլ ծախսեր | | |
| Գործառնական գործունեության շահույթ | | 20 |
| Ֆինանսական ծախսեր | | |
| Շահույթ մինչ հարկեր | 3964 | 3852 |
| Շահութահարկի գծով ծախս | | -4 |
| Տարվա շահույթ | 3964 | 3848 |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ | | |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք | 3964 | 3848 |

***Տնօրեն*** ***Պ. ՄԻՆԱՍՅԱՆ***
***Գլխ. Հաշվապահ*** ***Ա.ՍԻՄՈՆՅԱՆ***

**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն**

| Հազար դրամ | Բաժնետիրական Կապիտալ | Կուտակված Շահույթ | Պահուստային Կապիտալ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| 2011թ.հունվարի 1-ի դրությամբ | 50 | 17166 | | 17216 |
| Տարվա շահույթ | | 3848 | | 3848 |
| Վճարված շահաբաժիններ | | 12000 | | 12000 |
| 2011թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ | 50 | 9014 | 0 | 9064 |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ | | 3964 | | 3964 |
| Վճարված շահաբաժիններ | | | | 0 |
| 2012թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ | 50 | 12978 | 0 | 13028 |

***Տնօրեն*** ***Պ. ՄԻՆԱՍՅԱՆ***
***Գլխ. Հաշվապահ*** ***Ա.ՍԻՄՈՆՅԱՆ***

**Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն**

| Հազար դրամ | 2012 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2011 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Գործառնական գործունեություն | | |
| Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը | 5644 | 14125 |
| Իրացումից մուտքեր | 52240 | 47157 |
| Գործառնական այլ գործունեությունից մուտքեր | | 24 |
| Ծառայությունների մատուցման գծով ելքեր | 2845 | 2887 |
| Վճարումներ աշխատակիցներին | 5454 | 4854 |
| Վճարումներ բյուջե | 32856 | 29669 |
| Վճարումներ սոցիալական ապահովագրության Հիմնադրամ | 1386 | 1252 |
| Վճարված տոկոսներ | | |
| այլ վճարումներ | | |
| Ընդամենը գործառնական գործունեությունից դրամ. միջոց. զուտ հոսքեր | 9699 | 8519 |
| Ներդրումային գործունեություն | | |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր | | |
| Ոչ նյութական ակտիվների ձեռքբերումից ելքեր | 5000 | 5000 |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների այլ ելքեր | | |
| Ընդամենը ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | -5000 | -5000 |
| Ֆինանսական գործունեություն | | |
| Ստացված վարկերից և փոխառություններից մուտքեր | | |
| Ստացված վարկերի և փոխառությունների մարումից ելքեր | | |
| Վճարված շահաբաժիններ | | 12000 |
| Ընդամենը ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | |
| Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր | -5000 | -17000 |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ | 0 | 0 |
| Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին | 10343 | 5644 |

***Տնօրեն*** ***Պ. ՄԻՆԱՍՅԱՆ***
***Գլխ. Հաշվապահ*** ***Ա.ՍԻՄՈՆՅԱՆ***

# Անդրանիկ Կարապետյանն առաջին մեդալը պարգեւեց Հայաստանին

Ալբանիայում ընթացող ծանրամարտի Եվրոպայի մեծահասակների առաջնությունում Հայաստանի 3 պատվիրակներից առաջինը մրցահարթակ դուրս եկավ 18-ամյա Անդրանիկ Կարապետյանը, որն առաջին մեդալը պարգեւեց մեր հավաքականին: Պատանեկան եւ երիտասարդական մրցահարթակներում մրցանակակիր դարձած մեր ծանրորդը հաջողությամբ նշեց նորամուտը Եվրոպայի մեծահասակների առաջնությունում:




Անդրանիկը շատ վստահ ելույթ ունեցավ՝ չեմպիոնի տիտղոսի համար պայքար մղելով իր ավելի փորձառու մրցակիցների հետ: Նա անթերի կատարեց պոկում վարժությունը՝ հաջորդաբար բարձրացնելով 153, 157 եւ 160 կգ: Այդ ցուցանիշով Անդրանիկը պոկում վարժությունում արժանացավ արծաթե մեդալի՝ ընդամենը 1 կգ-ով զիջելով ռուսաստանցի Դմիտրի Խոմյակովին: Բրոնզե մեդալը նվաճեց մոլդովացի Ալեքսանդր Սպակը՝ 157 կգ:

Շատ լարված ու դրամատիկ պայքարում ընթացան հրում վարժության մրցումները, որոնց արդյունքում էլ պետք է որոշվեր Եվրոպայի չեմպիոնը մինչեւ 77 կգ քաշային կարգում: Հայ ծանրորդը վարժությունը սկսեց 180 կգ-ով: Նույնպիսի արդյունք ցույց տվեց նաեւ Խոմյակովը: 2-րդ մոտեցման ժամանակ Անդրանիկին չենթարկվեց 185 կգ-անոց ծանրաձողը, իսկ ահա նրա ռուս մրցակիցը հաջողությամբ բարձրացրեց այդ ծանրությունը: 3-րդ մոտեցման ժամանակ հայ ծանրորդը պատվիրել էր 186 կգ: Փորձը հաջողությամբ պսակվեց: Անդրանիկ Կարապետյանը երկամարտում ցույց տվեց 346 կգ (160+186) արդյունք: Նույնպիսի արդյունքի էին հասել նաեւ մոլդովացի Ալեքսանդր Սպակն ու ռումինացի Ռազվան Մարտինը: Արծաթե եւ բրոնզե մեդալակիրներին որոշելու համար հարկ եղավ հաշվի առնել ծանրորդների անձնական քաշերը: Կարապետյանը մի քանի 100 գրամով ծանր էր նրանցից, ուստի զրկվեց երկամարտում մրցանակակիր դառնալու հնարավորությունից եւ բավարարվեց 4-րդ տեղով: Ինչ խոսք, ցավալի է մեդալից զրկվելը: Սակայն Անդրանիկի ելույթն իրոք գոհացուցիչ էր:

Եվ այսպես, մինչեւ 77 կգ քաշային կարգում Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը նվաճեց ռուսաստանցի Դմիտրի Խոմյակովը երկամարտի 351 կգ (161+190) արդյունքով: Արծաթե մեդալը բաժին հասավ Ալեքսանդր Սպակին, բրոնզը՝ Ռազվան Մարտինին:

# Պատանի հայ ծանրորդների հերթական թույլ ելույթները

**Տաշքենդում ընթացող ծանրամարտի աշխարհի պատանեկան առաջնությունում հայ ծանրորդներն առայժմ անհաջող են հանդես գալիս: Մինչեւ 63 կգ քաշային աղջիկների մրցավեճում Ռոզալիա Ավետիսյանը երկամարտի 156 կգ (68+88) արդյունքով 27 մասնակիցների մեջ գրավեց 17-րդ տեղը: Իսկ Աղունիկ Հակոբյանը 138 կգ (61+77) արդյունքով զբաղեցրեց 24-րդ հորիզոնականը:**

**Աշխարհի չեմպիոնուհու տիտղոսը նվաճեց եգիպտացի Սառա Սամիր Էլսայեդը, որը երկամարտում ցույց տվեց 221 կգ (101+120) արդյունք: Արծաթե մեդալը նվաճեց չինացի Յանֆենգ Չենը՝ 200 կգ (97+103), իսկ բրոնզե մրցանակակիր դարձավ մեքսիկացի Ջենիֆեր Կանտուն՝ 199 կգ (87+112):**

**Մինչեւ 77 կգ քաշային պատանիների մրցապայքարում Սամվել Գասպարյանը երկամարտի 252 կգ (107+145) արդյունքով 30 մասնակիցների մեջ գրավեց 19-րդ տեղը: Չեմպիոն հռչակվեց ռուսաստանցի Խեթագ Խուգաեւը՝ 312 կգ (144+168): 2-րդ տեղը գրավեց ղազախ Այաթ Ամիրբեկովը՝ 297 կգ (136+161): Բրոնզե մեդալը բաժին հասավ հնդիկ Ռահուլ Ռագալային՝ 296 կգ (136+160):**

# Իսպանական եւ գերմանական ակումբները բաժանվեցին զույգերի

Երեկ շվեյցարական Նիոն քաղաքում կայացած վիճակահանությունը իսպանական եւ գերմանական ակումբներին բաժանեց զույգերի: Մյունխենի «Բավարիան» ապրիլի 23-ին կհյուրընկալի «Բարսելոնային», իսկ հաջորդ օրը Դորտմունդում կմրցեն «Բորուսիան» եւ Մադրիդի «Ռեալը»: Պատասխան հանդիպումները կկայանան ապրիլի 30-ին եւ մայիսի 1-ին: Չեմպիոնների լիգայի եզրափակիչը տեղի կունենա մայիսի 25-ին Լոնդոնի «Ուեմբլի» մարզադաշտում:



Չի բացառվում, որ չեմպիոնների գավաթի եզրափակիչը լինի զուտ իսպանական կամ գերմանական: Նախկինում 3 դեպք է գրանցվել, երբ եզրափակիչում մրցել են միեւնույն երկրի ներկայացուցիչները: 2000-ին գավաթը վիճարկել էին «Ռեալն» ու «Վալենսիան», 3 տարի անց՝ «Միլանն» ու «Յուվենտուսը», իսկ 2008-ին Մոսկվայում մրցավեճի էին բռնվել «Մանչեսթր Յունայթեդն» ու «Չելսին»:

«Ռեալը» 2002-ին չեմպիոնների գավաթը նվաճելուց հետո ոչ մի կերպ չի կարողանում եզրափակիչ մտնել: Նախորդ 2 խաղարկություններում «Ռեալը» կիսաեզրափակիչում պարտվել էր «Բարսելոնին» եւ «Բավարիային»:

«Ռեալն» ու «Բորուսիան» առաջին անգամ չեմպիոնների լիգայի փլեյ-օֆում մրցել են 1997/98-ին կիսաեզրափակիչում: Մադրիդում «Ռեալը» հաղթեց 2-0 հաշվով, պատասխան խաղն ավարտվեց գոլազուրկ ոչ-ոքի: 2002/03-ին էլ կրկին հաջողությունն ուղեկցեց «Ռեալին» (2-1, 1-1):

«Բարսելոնն» ու «Բավարիան» 4-րդ անգամ են մրցելու եվրոգավաթներում: Առաջին հանդիպումը կայացել է ՈՒԵՖԱ-ի գավաթի մրցաշարում 1995/96-ին: Հաջողությունն ուղեկցել է «Բավարիային» (2-2, 2-1): Մտնելով եզրափակիչ, 2 խաղերի ընդհանուր արդյունքով (5-1) «Բավարիան» հաղթելով «Բորդոյին», նվաճեց ՈՒԵՖԱ-ի գավաթը: Մրցակիցների հաջորդ դիմակայությունը տեղի ունեցավ չեմպիոնների լիգայում 1997-ին: Խմբային մրցաշարի 2 խաղերում էլ հաղթեց «Բավարիան» (1-0, 2-1) ու մտավ քառորդ եզրափակիչ: Իսկ ահա 2008/09-ին Խոսեպ Գվարդիոլայի գլխավորությամբ «Բարսելոնը» քառորդ եզրափակիչում հաղթահարեց «Բավարիայի» արգելքը (4-0, 1-1):

## ՇԱԽՄԱՏ

# Կես միավորի կորուստը Գաբրիելին զրկեց առաջատարի դիրքից

**Դուբայի շախմատի մրցաշարի 5-րդ տուրում Գաբրիել Սարգսյանն առաջին կես միավորը կորցրեց՝ հաշտություն կնքելով Սերգեյ Վոլկովի հետ: Կես միավորի կորուստը Գաբրիելին զրկեց առաջատարի դիրքից: Աղյուսակը 5 միավորով միանձնյա գլխավորեց ռուսաստանցի Ալեքսանդր Ռախմանովը, որը հաղթեց Յան Էլվեստին:**

**Տուրը հաջող էր Վլադիմիր Հակոբյանի համար, որը մրցաշարում 4-րդ հաղթանակը տոնեց: Նրա մրցակիցը վրացի գրոսմայստեր Լեւան Պանցուլայան էր: Հակոբյանը, Սարգսյանը, Սերգեյ Վոլկովը, Ռոման Էդուարդը եւ Յու Վենջունը 4,5 միավորով հետապնդում են առաջատարին:**

**4 միավոր ունի Տիգրան Պետրոսյանը, որը հաշտություն կնքեց Պավել Կոցուրի հետ: Հաղթելով Մուստաֆա Թավֆեյկին, 4 միավոր վաստակեց նաեւ Հովիկ Հայրապետյանը: Հաջող խաղացին նաեւ Լիլիթ Գալոյանն ու Մարկ Բասենցյանը, որոնք հաղթեցին համապատասխանաբար Մոհամեդ Էլնեմրին ու Ֆարեդ Ահմեդին: Նրանք վաստակեցին 3 միավոր:**

# «Ատոմի» կազմում լավագույնը Վահե Բաղդասարյանի արդյունքն է

**Շախմատի ՌԴ առաջնության 5-րդ տուրում Սանկտ Պետերբուրգի շախմատի ֆեդերացիայի թիմը 3,5-2,5 հաշվով հաղթելով «Յուգրային», 19,5 միավորով շարունակում է գլխավորել աղյուսակը: Սերգեյ Մովսիսյանին այդ մրցախաղում հանգիստ էր տրվել: Հայ շախմատիստը հաջող է հանդես գալիս թիմի կազմում՝ 4 հնարավորից վաստակելով 3 միավոր:**

**Առաջատարին մեկ միավոր է զիջում «Մալախիտը», որը 4-2 հաշվով պարտության մատնեց «Կազանին»: «Պերսպեկտիվան» 2,5-3,5 հաշվով զիջեց «Պոլիտեխնիկին»: Առաջին խաղատախտակի վրա Արթուր Գաբրիելյանը ոչ-ոքի խաղաց Դմիտրի Կոկորեւի հետ: Գոռ Հայրապետյանն էլ հաշտություն կնքեց Սերգեյ Վոկարեւի հետ:**

**Մրցաշարում առաջին հաղթանակը տոնեց «Ատոմը»՝ 4,5-1,5 հաշվով առավելության հասնելով հետնապահի՝ Կալուգայի մարզի թիմի նկատմամբ: Իրենց մրցախաղերը շահեցին Վահե Բաղդասարյանը, Գեւորգ Հարությունյանը եւ Տիգրան Սիմոնյանը, իսկ Գեորգի Պողոսյանը պարտվեց: «Ատոմը» 9 միավորով 16-րդ տեղում է: Թիմի կազմում լավագույն արդյունքը ցույց է տվել Վահե Բաղդասարյանը, որն ունի 3 միավոր: Ընդ որում նա վերջին 3 տուրերում հաղթել է մրցակիցներին: 2,5 միավոր է վաստակել Գեւորգ Հարությունյանը:**

# Անդրեասյանն ու Սիմոնյանը հաղթողների թվում են

Գրոսմայստերներ Զավեն Անդրեասյանն ու Հրայր Սիմոնյանը «Սամոցվետի» թիմի կազմում դարձել են համացանցով անցկացված թիմային անդրանիկ առաջնության հաղթողներ: 10 թիմերի մրցավեճում «Սամոցվետին» վաստակել է 41,5 միավոր: Թիմի կազմում հանդես են եկել նաեւ ուկրաինացի շախմատիստներ Ալեքսանդր Զուբովը, Դմիտրի Կոնոնենկոն, Իգոր Կովալենկոն եւ Ալեքսեյ Բորտնիկը:

# Նետաձիգները որոշեցին ուժեղագույններին

36 նետաձիգներ վիճարկեցին Հայաստանի չեմպիոնի տիտղոսը: Աղջիկների մրցաշարում բոլորից դիպուկը Գոհար Շահնազարյանն էր: 2-րդ եւ 3-րդ տեղերը զբաղեցրին Գոհար Հակոբյանն ու Ռոզա Գրիգորյանը:

Տղաների մրցաշարում հանրապետության չեմպիոն հռչակվեց Արշակ Պետրոսյանը: 2-րդ տեղը զբաղեցրեց Վասիլ Շահնազարյանը, բրոնզե մրցանակակիր դարձավ Արամայիս Հայրապետյանը:

Առաջնության արդյունքներով կազմավորվեց նետաձգության Հայաստանի հավաքականը, որն ապրիլի 15-21-ը Ֆրանսիայի Ռիոմ քաղաքում կմասնակցի Եվրոպայի Գրան պրիի խաղարկության 1-ին փուլին: Ի դեպ, այդ մրցաշարի 2-րդ փուլի մրցումներն անցկացվելու են Հայաստանում մայիսի 27-ից հունիսի 1-ը:

# Անգլիական թիմերից պայքարը կշարունակի միայն «Չելսին»

**Ֆուտբոլի Եվրոպայի լիգայի գավաթի համար անգլիական 3 թիմերից պայքարը կշարունակի միայն Լոնդոնի «Չելսին», որը թեեւ Կազանում 2-3 հաշվով պարտվեց «Ռուբինին», սակայն ի հաշիվ սեփական հարկի տակ տարած հաղթանակի (3-1), մտավ կիսաեզրափակիչ: Այդ փուլում «Չելսին» ապրիլի 25-ին կհյուրընկալվի շվեյցարական «Բազելին»: Թիմերի պատասխան հանդիպումը կկայանա մայիսի 2-ին: Դա հայտնի դարձավ երեկ շվեյցարական Նիոնում կայացած վիճակահանությամբ:**

**«Բազելին» կրկին հարկ կլինի մրցել անգլիական ակումբի հետ: Շվեյցարացիները քառորդ եզրափակիչում կարողացան հաղթահարել անգլիական մեկ այլ թիմի՝ «Տոտենհեմի» արգելքը: Ինչպես մրցակիցների առաջին խաղում, Բազելում էլ գրանցվեց մարտական ոչ-ոքի՝ 2-2: Հաղթողը որոշվեց 11 մ հարվածներով, որում շվեյցարացիները դիպուկ գտնվեցին՝ 4-1:**

**Անգլիական մյուս ակումբն էլ՝ «Նյուքասլը», դուրս մնաց հետագա պայքարից: Սեփական հարկի տակ «Նյուքասլին» չհաջողվեց ռեւանշի հասնել պորտուգալական «Բենֆիկայից» կրած պարտության (1-3) դիմաց: Գրանցվեց ոչ-ոքի՝ 1-1: Ընդ որում հյուրերը պարտությունից խուսափեցին ավելացված ժամանակում: Թեեւ պարտվելու դեպքում էլ «Բենֆիկան» հաջորդ փուլի ուղեգիր կնվաճեր:**

**Կիսաեզրափակիչում «Բենֆիկան» առաջին խաղում կհյուրընկալվի թուրքական «Ֆեներբահչեին»: Վերջինս պայքարից դուրս մղեց իտալական «Լացիոյին»՝ Հռոմում խաղն ավարտելով ոչ-ոքի՝ 1-1: Առաջին խաղում «Ֆեներբահչեն» սեփական հարկի տակ հաղթել էր 2-0 հաշվով:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

***"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ, ք.Երեւան, Կալենցի 11***
***Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվություն***
***2013թ. Մարտի 31***

*Հազար ՀՀ դրամ*

| | Հաշվետու ժամանակաշրջան | Նախորդ ժամանակաշրջան (ստուգված/ չստուգված) |
|---|---|---|
| Տոկոսային եւ նմանատիպ եկամուտներ | 529,738 | 440,942 |
| Տոկոսային եւ նմանատիպ ծախսեր | (69,176) | (61,380) |
| Զուտ տոկոսային եկամուտ | 460,562 | 379,562 |
| Արտարժութային գործարքներից զուտ շահույթ/(վնաս) | (62,775) | (18,037) |
| Այլ գործառնական եկամուտներ | 4,656 | 6,341 |
| Այլ գործառնական ծախսեր | (4,642) | (11,842) |
| Զուտ կոմիսիոն եւ այլ եկամուտ | 397,801 | 356,024 |
| Վարկերից եւ այլ փոխառություններից առաջացած կորուստներ | (5,541) | (10,650) |
| Ընդհանուր վարչական ծախսեր | (189,098) | (144,028) |
| Շահույթ մինչեւ հարկումը | 203,162 | 201,346 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 3,420 | 40,631 |
| Ժամանակաշրջանի Շահույթ | 199,742 | 160,715 |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունք | - | - |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո | - | - |
| Համապարփակ ֆինանսական արդյունք, այդ թվում | 199,742 | 160,715 |
| Մայր կազմակերպության բաժնեմաս | - | - |
| Չվերահսկվող բաժնեմաս | - | - |

***Տնօրեն՝*** ***Գլխավոր հաշվապահ՝***
***Գ. Վարդանյան*** ***Ա. Սահակյան***

***"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ, ք.Երեւան, Կալենցի 11***
***Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվություն***
***2013թ. Մարտի 31***

*Հազար ՀՀ դրամ*

| | Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ | Նախորդ տարվա վերջի դրությամբ |
|---|---|---|
| **Ակտիվներ** | | |
| Դրամական միջոցներ եւ բանկային հաշիվներ | 275,102 | 217,646 |
| Բանկերում տեղաբաշխված միջոցներ | 232,016 | 306,313 |
| Հաճախորդներին տրված վարկեր եւ այլ փոխատվություններ | 7,829,472 | 6,890,601 |
| Հիմնական միջոցներ եւ ոչ նյութական ակտիվներ | 94,705 | 83,323 |
| Այլ ակտիվներ | 19,471 | 23,784 |
| Ընդամենը ակտիվներ | 8,450,766 | 7,521,667 |
| **Պարտավորություններ** | | |
| Ստացված վարկեր, փոխառություններ | 3,848,735 | 3,092,661 |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ | 90,958 | 96,112 |
| Պահուստներ | 41,508 | 41,508 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 109,248 | 136,673 |
| Այլ պարտավորություններ | 25,039 | 19,177 |
| Ընդամենը պարտավորություններ | 4,115,488 | 3,386,131 |
| **Կապիտալ** | | |
| Կանոնադրական կապիտալ | 2,000,000 | 2,000,000 |
| Լրացուցիչ կապիտալ | 850,404 | 850,404 |
| Գլխավոր պահուստ | 65,702 | 42,465 |
| Կուտակված շահույթ | 1,419,172 | 1,242,667 |
| **Ընդամենը կապիտալ** | **4,335,278** | **4,135,536** |
| **Ընդամենը պարտավորություններ եւ կապիտալ** | **8,450,766** | **7,521,667** |

***Տնօրեն՝*** ***Գլխավոր հաշվապահ՝***
***Գ. Վարդանյան*** ***Ա. Սահակյան***

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տեղեկացնում ենք, որ «Կամուրջ» ՈւՎԿՓԲԸ-ի կողմից առաջարկվող սպառողական վարկերը տրամադրվում են անհատական և խմբային երաշխավորությամբ, հետևյալ պայմաններով.

▼ խմբի անդամների քանակ՝ 3-15 անդամ,
▼ ժամկետ՝ 3-24ամիս,
▼ վարկի գումար՝50,000-1,500,000 ՀՀ դրամ,
▼ տարեկան տոկոսադրույք՝ 18%-22% (հաշվարկվում է վարկի մնացորդի նկատմամբ),
▼ վարկի տրամադրման վճար՝ 1.5%-6%,
▼ սպասարկման վճար՝ 0.2%- 0.5%,
▼ տուժանք ՝ օրական 1 % (առավելագույնը 45 օրացուցային օր):

Տեղեկացնում ենք նաև, որ «Կամուրջ ՈւՎԿ» ՓԲԸ-ի 2013թ.1-ին եռամսյակի միջանկյալ ֆինանսական հաշվետվություններին կարող եք ծանոթանալ www.kamurj.am «Կամուրջ»ՈւՎԿՓԲԸ-ի պաշտոնական ինտերնետային կայքում:

## Երեւանի քաղաքապետարանը հայտարարում է

**մրցույթ «Երեւանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ–ի տնօրենի տեղակալ-ծրագրի ղեկավարի թափուր պաշտոնը համալրելու նպատակով: Մրցույթին մասնակցել ցանկացողները աշխատանքային նկարագրերին եւ ներկայացվող մասնագիտական պահանջներին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում՝ www.yerevan.am եւ www.career-center.am կայքում:**

**Հայտերը պետք է ուղարկվեն vacancy@yerevan.am էլեկտրոնային հասցեին՝ առարկայի տողում (subject line) նշելով պաշտոնի անվանումը:**

**Բոլոր հայտերը պետք է ներկայացվեն հայերեն եւ անգլերեն լեզուներով՝ Adobe PDF ֆորմատով մինչեւ 2013թ. մայիսի 3-ը՝ ժամը 18:00-ն:**

**Սահմանված ժամկետից ուշ ստացված հայտերը չեն դիտարկվի:**

**Հայտերը պետք է պարունակեն հետեւյալ փաստաթղթերը՝**

**1. Ուղեկցող նամակ (առավելագույնը 1 էջ)**
**2. Ինքնակենսագրություն (Resume կամ CV)**
**3. Երկու երաշխավորողների անունները եւ կոնտակտային տվյալները:**

***Երեւանի քաղաքապետարան***

**"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ, ք.Երեւան, Կալենցի 11**
**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն**
**2013թ. Մարտի 31**

*Հազար ՀՀ դրամ*

| | Կանոնադրական կապիտալ | Լրացուցիչ կապիտալ | Գլխավոր պահուստ | Չբաշխված շահույթ/ վնաս | Ընդամենը սեփական կապիտալ |
|---|---|---|---|---|---|
| **Նախորդ ժամանակաշրջան** | | | | | |
| Մնացորդը առ 2011թ. Դեկտեմբերի 31 | 500,000 | 1,474,982 | | 849,310 | 2,824,292 |
| Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝ | 1,500,000 | | | | 1,500,000 |
| Ներդրումներ կանոնադրական կապիտալում եւ կանոնադրական կապիտալի այլ աճ | 1,500,000 | | | | 1,500,000 |
| Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված եւ շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | | | |
| Համապարփակ եկամուտ | | | | 464,744 | 464,744 |
| Շահութաբաժիններ | | | | | |
| Զուտ շահույթ/վնաս | | | 42,465 | (42,465) | |
| Բաժնետիրոջից շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն ստանալու արդյունք՝ առանց հետաձգված հարկի | | (624,578) | | | (624,578) |
| Այլ բաշխումներ | | | | (28,922) | (28,922) |
| Մնացորդը առ 2012թ. Դեկտեմբերի 31 | 2,000,000 | 850,404 | 42,465 | 1,242,667 | 4,135,536 |
| **Հաշվետու ժամանակաշրջան** | | | | | |
| Մնացորդը առ 2012թ. Դեկտեմբերի 31 | 2,000,000 | 850,404 | | 1,242,667 | 4,135,536 |
| Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝ | | | | | |
| Ներդրումներ կանոնադրական կապիտալում եւ կանոնադրական կապիտալի այլ աճ | | | | | |
| Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված եւ շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | | | |
| Համապարփակ եկամուտ | | | | 199,742 | 199,742 |
| Շահութաբաժիններ | | | | | |
| Զուտ շահույթ/վնաս | | | 23,237 | (23,237) | |
| Բաժնետիրոջից շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն ստանալու արդյունք՝ առանց հետաձգված հարկի | | | | | |
| Այլ բաշխումներ | | | | | |
| Մնացորդը առ 2013թ. Մարտի 31 | 2,000,000 | 850,404 | 23,237 | 1,419,172 | 4,335,278 |

***Տնօրեն՝*** ***Գլխավոր հաշվապահ՝***
***Գ. Վարդանյան*** ***Ա. Սահակյան***

**"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ, ք.Երեւան, Կալենցի 11**
**Դրամական միջոցների հոսքերի մասին միջանկյալ հաշվետվություն**
**2013թ. Մարտի 31**

*Հազար ՀՀ դրամ*

| | Հաշվետու ժամանակաշրջան | Նախորդ ժամանակաշրջան |
|---|---|---|
| 1. Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից | (555,726) | (170,669) |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր մինչեւ գործառնական ակտիվների եւ պարտավորությունների փոփոխությունը | 258,641 | 195,199 |
| Ստացված տոկոսներ | 434,960 | 329,473 |
| Վճարված տոկոսներ | (21,788) | (14,359) |
| Ստացված տույժեր եւ տուգանքներ | 4,267 | 2,477 |
| Վճարված աշխատավարձ եւ դրան հավասարեցված այլ վճարումներ | (86,116) | (80,614) |
| Վճարված հարկեր | (72,682) | (41,778) |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական ակտիվների եւ պարտավորությունների փոփոխություններից | (814,367) | (365,868) |
| Տեղաբաշխված միջոցների նվազում (ավելացում) | (764,395) | (63,188) |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից | (49,972) | (302,680) |
| 2. Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից | (14,852) | (3,579) |
| Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (14,852) | (3,579) |
| 3. Դրամական միջոցների զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից | 626,158 | 230,000 |
| Ստացված վարկերի/փոխառությունների ավելացում (նվազում) | 626,158 | 230,000 |
| Բաշխումներ | - | - |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների եւ դրանց համարժեքների վրա | 1,877 | 1,164 |
| Դրամական միջոցների զուտ հոսք | 57,456 | 56,916 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում | 217,646 | 247,236 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում | 275,102 | 304,152 |

***Տնօրեն՝*** ***Գլխավոր հաշվապահ՝***
***Գ. Վարդանյան*** ***Ա. Սահակյան***

**"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ, ք.Երեւան, Կալենցի 11**
**Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվություն**
**2013թ. Մարտի 31**

Հազար ՀՀ դրամ

| Նորմատիվներ | Փաստացի մեծությունը | Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը | Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը |
|---|---|---|---|
| Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը | 2,000,000 | 150,000 | խախտում առկա չէ |
| Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը | 3,473,207 | 150,000 | խախտում առկա չէ |
| Ընդհանուր կապիտալի եւ ռիսկով կշռված ակտիվների գումարների միջեւ նվազագույն հարաբերակցությունը (Ն1 նորմատիվ) | 40.6% | 10.0% | խախտում առկա չէ |
| Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը (Ն3 նորմատիվ) | 0.8% | 25.0% | խախտում առկա չէ |

***Տնօրեն՝*** ***Գլխավոր հաշվապահ՝***
***Գ. Վարդանյան*** ***Ա. Սահակյան***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 12.4.2013, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: